Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 4

Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի
2017 թվականի հոկտեմբերի 27-ի նիստի

Նախագահում էր՝ ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը:

Մասնակցում էին կոլեգիայի անդամներ՝ Արմեն Հարությունյանը, Հայկ Ասլանյանը, Դավիթ Մելքոնյանը, Վահե Հարությունյանը, Արմեն Մարուխյանը, Արտակ Հարությունյանը, Գևորգ Բաղդասարյանը, Վահե Ռաֆայելյանը, Եղիազար Ավագյանը, Գրիգոր Պողոսյանը և Ռաֆֆի Ասլանյանը:

Ներկա էին՝ ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Ա.Սիմոնյանը, ՀՀ գլխավոր դատախազության ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերով վարչության պետ Ա.Փանոսյանը, ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության վարչության պետի տեղակալ Կ.Բիշարյանը, ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազներ Կ.Կարապետյանը և Դ.Կարապետյանը, Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազ Ա.Չիչոյանը, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազ Ա.Աֆանդյանը, Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների դատախազ Դ.Վեքիլյանը, Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազ Գ.Գևորգյանը, Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազի տեղակալ Ա.Առաքելյանը, Շենգավիթ վարչական շրջանի դատախազ Գ.Էլիզբարյանը, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազ Ա.Արսենյանը, Արարատի մարզի դատախազ Ս.Հովհաննիսյանը, Արմավիրի մարզի դատախազ Վ.Հովհաննիսյանը, Արագածոտնի մարզի դատախազ Վ.Միլիտոնյանը, Գեղարքունիքի մարզի դատախազ Ս.Մնացականյանը, Լոռու մարզի դատախազ Ա.Մարտիրոսյանը, Կոտայքի մարզի դատախազ Ռ.Խաչատրյանը, Շիրակի մարզի դատախազ Կ.Գաբրիելյանը, Տավուշի մարզի դատախազ Վ.Գրիգորյանը, Վայոց ձորի մարզի դատախազ Ն.Ավագյանը, Սյունիքի մարզի դատախազ Վ.Հարությունյանը, ՀՀ զինվորական դատախազի տեղակալներ Ա.Սարդարյանը, Տ.Ամբարյանը և Ա.Կրկյաշարյանը, Երևանի կայազորի զինվորական դատախազ Ա.Անտոնյանը, Գորիսի կայազորի զինվորական դատախազ Ա.Հարությունյանը, Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազ Ա.Ասլանյանը, Լոռու կայազորի զինվորական դատախազ Կ.Հարությունյանը, Սևանի կայազորի զինվորական դատախազ Գ.Հայրապետյանը, Շիրակի կայազորի զինվորական դատախազ Մ.Բաղդասարյանը, ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալներ Ա.Մանուկյանը և Շ.Իսրայելյանը:

Հրավիրվել և կոլեգիայի նիստին մասնակցում էին.

Օրակարգի 1-ին հարցով՝ ՀՀ ԿԱ ոստիկանության պետի առաջին տեղակալ Հ.Պողոսյանը, ՀՀ ոստիկանության ԻԿ պետ Ա.Ղուկասյանը, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության պետ Մ.Համբարձումյանը, ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի տեղակալ Վ.Հովհաննիսյանը, ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետ Թ.Պետրոսյանը, ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության պետի պաշտոնակատար Ա.Վարդանյանը, ՀՀ ռազմական ոստիկանության պետ Ա.Բաղդասարյանը:

Օրակարգի 2-րդ հարցով՝ ՀՀ ԿԱ ոստիկանության պետի առաջին տեղակալ Հ.Պողոսյանը, ՀՀ ոստիկանության ԻԿ պետ Ա.Ղուկասյանը, Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կ.Արեյանը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ Վ.Տերտերյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Քննությունից խուսափողների նկատմամբ հետախուզական աշխատանքների կազմակերպման և իրականացման նկատմամբ դատախազական հսկողության վիճակի քննարկումը (Հիմք՝ ՀՀ գլխավոր դատախազի 04.05.2017թ. թիվ 39 հրամանը):

Զեկուցող՝
ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Ա.Հարությունյան

2. 2016 թվականի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի նախաքննության նկատմամբ իրականացված դատախազական հսկողության և դատավարական ղեկավարման, ինչպես նաև մեղադրանքի պաշտպանության վիճակի քննարկումը (Հիմք՝ ՀՀ գլխավոր դատախազության 2017 թվականի 1-ին կիսամյակի աշխատանքի ծրագրի 10-րդ կետը):

Զեկուցողներ՝
ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Ա.Հարությունյան,
ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ Գ.Բաղդասարյան

3. Նորանշանակ դատախազների երդման արարողությունը:

Ներկայացնող՝
ՀՀ դատախազության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ Ս.Պարսամյան

1. Լսեցին ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Ա.Հարությունյանին:

Արտահայտվեցին՝ Ա.Հարությունյանը, Վ.Հարությունյանը, Գ.Բաղդասարյանը, Հ.Պողոսյանը, Թ.Պետրոսյանը, Ա.Ղուկասյանը, Վ.Հովհաննիսյանը:

Լսելով և քննարկելով քննությունից խուսափողների նկատմամբ հետախուզական աշխատանքների կազմակերպման և իրականացման նկատմամբ դատախազական հսկողության վիճակի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Ա.Հարությունյանի զեկույցը՝ ՀՀ դատախազության կոլեգիան նշում է, որ, ՀՀ գլխավոր դատախազի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 39 հրամանի հիման վրա, աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրվել և ամփոփվել է հետախուզական աշխատանքների կազմակերպման և իրականացման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության վիճակը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2000-2016թթ. ընթացքում ՀՀ-ում բոլոր տեսակի հանցագործություններով հետախուզվող անձանց հայտնաբերման ամենաբարձր ցուցանիշը /քանակական առումով/ գրանցվել է 2010թ.-ին՝ 13736 հետախուզվողից հայտնաբերվել է 1960-ը: Հայտնաբերման ցուցանիշով /քանակական առումով/ նույն ժամանակահատվածում ամենաանարդյունավետը եղել է 2000 թվականը՝ 8316 հետախուզվողից հայտնաբերվել է 1322-ը:

2000-2016թթ. ընթացքում ՀՀ-ում բոլոր տեսակի հանցագործություններով հետախուզվող անձանց հայտնաբերման ամենաբարձր ցուցանիշը /տոկոսային առումով/ գրանցվել է 2000թ.՝ հայտնաբերվել է 8316 հետախուզվողների 15.9 %-ը: Հայտնաբերման ցուցանիշով /տոկոսային առումով/ նույն ժամանակահատվածում ամենաանարդյունավետը եղել է 2003թ.-ը՝ հայտնաբերվել է 12993 հետախուզվողների 10.7%-ը:

Նկատի ունենալով, որ հետախուզվողների թվում գերակշիռ մաս են կազմում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով հետախուզվողները, իսկ նշված հոդվածով հայտնաբերման ցուցանիշները կախված են եղել ոչ միայն օպերատիվ-հետախուզական աշխատանքներից, այլ նաև «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» 2003 թվականին ընդունված ՀՀ օրենքի գործողությունից, այդ իսկ պատճառով ուսումնասիրությունը կատարվել է բոլոր տեսակի հանցագործություններով և առանց ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով հետախուզվողների հայտնաբերման ցուցանիշների տարբերակման:

«Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ է մտել 01.03.2004թ. և 2005, 2007, 2009, 2010, 2011, 2012, 2013, 2015 թվականներին օրենքում կատարված փոփոխություններով և

լրացումներով օրենքի գործողության ժամկետը երկարաձգվել է: Բոլոր տեսակի հանցագործություններով հետախուզվողների հայտնաբերման ամենաբարձր քանակական ցուցանիշ գրանցած 2010, 2005, 2006, 2012, 2013 թվականներին, փաստորեն, նշված օրենքի գործողության ժամկետը երկարաձգվել է, և տվյալ տարիներին հայտնաբերման բարձր ցուցանիշները նաև կարող են պայմանավորված լինել տվյալ օրենքի գործողությամբ:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ հետախուզվողների /բացառությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով հետախուզվողների/ հայտնաբերման հաշվետու ժամանակահատվածի քանակական ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2016 թվականին՝ կազմելով 1002 հետախուզվող: Ամենացածր ցուցանիշը գրանցվել է 2008 թվականին՝ կազմելով 655 հետախուզվող կամ 2253 հետախուզվողների 29.1 %-ը:

Միևնույն ժամանակ, հետախուզվողների ամենացածր թիվը գրանցվել է 2008, ամենաբարձրը՝ 2016 թվականներին:

2000-2016թթ. ընթացքում ՀՀ-ում հետախուզվող անձանց /բացառությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով հետախուզվողների/ հայտնաբերման ամենաբարձր ցուցանիշը՝ արտահայտված տոկոսներով, գրանցվել է 2001 թվականին՝ հայտնաբերվել է 2327 հետախուզվողների 35.8 %-ը կամ 833 հետախուզվող:

Հայտնաբերման ցուցանիշով /տոկոսային առումով/ նույն ժամանակահատվածում ամենաանարդյունավետը եղել է 2005 թվականը՝ հայտնաբերվել է 2412 հետախուզվողների 11.7%-ը:

Հայտնաբերման արդյունավետության տոկոսային միջին ցուցանիշը կազմել է 31.3%:

ՀՀ դատախազության ստորաբաժանումներից ստացված տվյալների համաձայն՝ 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում հետախուզվել է ընդամենը 1773 անձ (բացառությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով մեղադրվողների): 2016թ. ընթացքում հետախուզում է հայտարարվել ևս 752 մեղադրյալի նկատմամբ, իսկ հայտնաբերվել է ընդամենը 596-ը /ներառված չեն պատժից և դատից խուսափելու համար հետախուզվողների տվյալները/:

2016թ. հետախուզում հայտարարված 752 մեղադրյալից նույն տարվա ընթացքում հայտնաբերվել է 372-ը կամ նրանց 49.4%-ը: Մինչդեռ, նույն տարվա ընթացքում հայտնաբերվել է նախորդ տարիներից հետախուզման մեջ գտնվող ընդամենը 224 մեղադրյալ կամ 2016թ. հունվարի 1-ի դրությամբ հետախուզման մեջ գտնվող 1773 մեղադրյալների 12.6%-ը:

2016թ. հայտնաբերված 596 հետախուզվողից 92-ը կամ 15.4%-ը ներկայացել է կամովին:

2016թ. հետախուզում հայտարարված և չհայտնաբերված 380 մեղադրյալից 43-ը կամ նրանց 11.3%-ը գտնվում է ՀՀ տարածքում:

Ներկայացված տվյալների հիման վրա կոլեգիան փաստում է, որ որքան արագ և «տաք հետքերով» են կազմակերպվել հետախուզական աշխատանքները, այնքան ավելի արդյունավետ են եղել դրանք, իսկ նախորդ տարիներից հետախուզման մեջ գտնվող անձանց հայտնաբերման ուղղությամբ իրականացված աշխատանքները բավարար մակարդակի վրա չեն գտնվում:

Ռազմական ոստիկանության կողմից ներկայացված տվյալների համաձայն՝ տվյալ մարմինը հետախուզական աշխատանքների իրականացմամբ սկսել է զբաղվել 2011 թվականից:

Ռազմական ոստիկանության կողմից հետախուզվողների ամենաբարձր թիվը գրանցվել է 2011-ին՝ 731 հետախուզվող, ամենացածրը՝ 2017-ին՝ 510 հետախուզվող:

Քանակական առումով ամենաարդյունավետը եղել է 2011 թվականը՝ հայտնաբերվել է 67 հետախուզվող, իսկ ամենաանարդյունավետը՝ 2015 և 2016 թվականները՝ հայտնաբերվել է 32-ական հետախուզվող:

Տոկոսային առումով ամենաարդյունավետը եղել է 2013 թվականը՝ հայտնաբերվել է հետախուզվողների 9.5%-ը: Տոկոսային առումով ամենաանարդյունավետը եղել է 2012 թվականը՝ հայտնաբերման տոկոսային ցուցանիշը կազմել է 4.4%:

Հայտնաբերման արդյունավետության տոկոսային միջին ցուցանիշը կազմել է 7.2%:

2017թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածով հետախուզման մեջ են գտնվել 22, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով՝ 70 անձ, այդ թվում՝ 1-ը հետախուզվում է ԼՂՀ ոստիկանության կողմից:

2017թ. օգոստոսի 16-ի դրությամբ հաշվառումից հանվել է 8 հետախուզվող. 3-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածով, 5-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով հետախուզվողներ:

Արդյունքում՝ 2017թ. օգոստոսի 16-ի դրությամբ ՀՀ-ում ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածով հետախուզման մեջ է գտնվել 19, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով՝ 65 հոգի:

ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածով հետախուզման մեջ գտնվող 19 անձից 10-ը գտնվում է ՀՀ տարածքում, 3-ը՝ ՀՀ տարածքից դուրս: ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով 65 հետախուզվողից 10-ը գտնվում է ՀՀ տարածքում, 4-ը՝ ՀՀ տարածքից դուրս:

2017թ. հունվարի 1-ից օգոստոսի 16-ը հաշվառումից հանված, ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածով հետախուզվողներից 2-ը, մինչև հաշվառումից հանվելը, գտնվել են ՀՀ-ում:

ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով հաշվառումից հանված 6 հետախուզվողից 2-ի վերաբերյալ ՀՀ ՍԷԿՏ համակարգում տվյալներ չկան, 2-ը հետախուզման ընթացքում գտնվել են ՀՀ տարածքում, 2-ը՝ ՀՀ-ից դուրս:

ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ և 104-րդ հոդվածներով հետախուզվող մյուս անձանց վերաբերյալ ՀՀ ՍԷԿՏ համակարգում տվյալներ չկան, ինչը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ ՀՀ ՍԷԿՏ համակարգը գործարկվել է 2005 թվականից:

Կոլեգիան փաստում է, որ հետախուզվող անձանց հայտնաբերման ուղղությամբ իրականացված աշխատանքների նկատմամբ դատախազական հսկողության վիճակի ուսումնասիրությամբ հայտնաբերվել են մի շարք խախտումներ, թերություններ և բացթողումներ, որոնք պայմանականորեն կարելի է դասակարգել 2 խմբի՝

1/ էական բնույթի խախտումներ, թերություններ և բացթողումներ, որոնցով պայմանավորված՝ անձինք կամ խուսափել, կամ խուսափում են պատասխանատվությունից կամ անհիմն շարունակում են ոստիկանությունում հաշվառված մնալ որպես հետախուզվողներ,

2/ ընդհանուր բնույթի թերություններ ու բացթողումներ, որոնք հիմնականում պայմանավորված են քննիչների կողմից հետաքննության մարմին քրեական գործ հարուցելու, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումների, հետախուզվողի դատվածության մասին պահանջագրի, հետախուզվողի անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի պատճեններն ուղարկված չլինելու հանգամանքով:

Հայտնաբերված էական բնույթի խախտումներն են՝

1. Անձանց նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին որոշում կայացրած լինելու պայմաններում, ուսումնասիրությունը կատարելու պահի դրությամբ, փաստացի հետախուզում չի իրականացվել՝

ա. հետախուզական գործեր չեն կազմվել,

բ. հետախուզական գործեր կազմելու կամ հետախուզումը դադարեցնելու հիմքերի վերաբերյալ տվյալներ չեն հայտնաբերվել,

գ. անձանց նկատմամբ հետախուզումը դադարեցվել է, այդ թվում՝ հետախուզվողի հայտնաբերման հիմքով, սակայն այդ կապակցությամբ հետաքննության մարմինը չի տեղեկացրել քննիչին, և այդ անձինք վարույթը կասեցված քրեական գործերով շարունակել են անցնել որպես հետախուզվողներ:

2. Պարզվել են դեպքեր, երբ անձինք տարբեր քրեական գործերով անցել են որպես հետախուզվողներ, որոնց վերաբերյալ կազմված է եղել մեկ հետախուզական գործ, և քրեական գործերից մեկով հետախուզումը դադարեցնելիս այդ անձի վերաբերյալ կազմված հետախուզական գործը դադարեցվել է. արդյունքում՝ մյուս քրեական գործով անձի նկատմամբ հետախուզումը դադարեցվել է անհիմն, և նա չի հետախուզվել:

3. Պարզվել է նաև, որ նույն անձի՝ 2 տարբեր քրեական գործերով հետախուզման մեջ գտնվելու պայմաններում, երբ վերջինս հայտնաբերվել է, հետաքննության մարմինն այդ մասին քրեական գործերից մեկով նախաքննություն իրականացնող մարմնին հայտնել է, մյուսին՝ ոչ:

4. Որոշ դեպքերում քննիչի կողմից պատշաճ կարգով հետաքննության մարմնին ուղարկվել են հետախուզում հայտարարելու հետ կապված անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, սակայն հետախուզական գործեր կազմվել են տարիներ /նույնիսկ 20 տարի/ անց:

5.Պարզվել է, որ հաճախ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները բավարար միջոցներ չեն ձեռնարկել հետախուզվողներին հայտնաբերելու և նախաքննական մարմնին ներկայացնելու ուղղությամբ, այդ թվում՝ մեղադրյալների՝ ՀՀ-ում գտնվելու պայմաններում, և ստացված օպերատիվ հանձնարարությունների կապակցությամբ հաճախ տրվել են ձևական պատասխաններ՝ ձեռնարկված միջոցառումները դրական արդյունքներ չտալու վերաբերյալ, ավելին, առանձին դեպքերում հետախուզական գործով հետախուզվողին հայտնաբերելու ուղղությամբ որևէ միջոց չի ձեռնարկվել:

Դրա վկայությունը կարող է լինել այն, որ 2016թ. ընթացքում հետախուզում հայտարարված և չհայտնաբերված 380 մեղադրյալից 43-ը կամ նրանց 11,3%-ը գտնվում է ՀՀ տարածքում:

6. ՀՀ քննչական կոմիտեի համապատասխան քննչական ստորաբաժանումներում վարույթը կասեցված քրեական գործերով, ինչպես նաև հետախուզական գործերով հետախուզվողների անձնական տվյալները համեմատվել են ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում հաշվառված հետախուզվողների տվյալների հետ, ինչի արդյունքում 28 քրեական գործով հայտնաբերվել են անհամապատասխանություններ:

Կոլեգիան նշում է, որ այսպիսի խախտումն ունի երկու հիմնական պատճառ՝ կամ ինֆորմացիոն կենտրոնի համապատասխան աշխատակիցների կողմից անձանց վերաբերյալ տվյալները սխալ են լրացվել, կամ նախաքննական մարմիններն են այդ տվյալները սխալ

ներկայացրել ՀՀ ոստիկանությանը: Ամեն դեպքում նման իրավիճակները կարող են և հնարավորություն են տվել հետախուզվող մեղադրյալներին խուսափելու հայտնաբերվելուց:

7. Առանձին դեպքերում հետախուզական գործեր կազմվել են մինչև հետախուզում հայտարարելու մասին որոշում կայացնելը, կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումները կայացվել են ավելի վաղ, քան անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումները:

8. Արձանագրվել են նաև այնպիսի դեպքեր, երբ մեղադրյալը, այդ թվում՝ հետախուզման մեջ գտնվելու ընթացքում, հատել է ՀՀ պետական սահմանը:

«ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը ժամանակավորապես վերցնում է հետաքննության կամ նախաքննության մարմինը:

ՀՀ Կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821-Ն որոշման 1-ին հավելվածի 19-րդ կետը սահմանում է, որ կասկածյալների, մեղադրյալների, որոնց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը կամ կալանքը, անձնագրերը ժամանակավորապես վերցնում են հետաքննության կամ նախաքննության մարմինները և դրանք տերերին են վերադարձվում **խափանման միջոցի վերացման դեպքում:**

ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 884-Ն որոշման 1-ին հավելվածի 5-րդ կետի «ե» ենթակետի համաձայն՝ հետախուզման մեջ գտնվող անձանց տվյալները՝ հետախուզման հիմք հանդիսացող քրեական գործի համարը, նախաձեռնողը, նրա հետ կապ հաստատելու **պարտադիր տվյալները**, քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածը, կիրառված խափանման միջոցը, հետախուզումը դադարեցնելու մասին տվյալները, ՀՀ ոստիկանությունից համակարգչային կապով տրամադրվում են Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգին (ՍԷԿՏ համակարգ):

Կոլեգիան փաստում է, որ այսպիսի իրավական կարգավորումների պայմաններում մեղադրյալները, այդ թվում՝ հետախուզվող, հնարավորություն են ունեցել հատելու ՀՀ պետական սահմանը:

9. Պարզվել է նաև 3 դեպք, երբ մեղադրյալները, այդ թվում՝ հետախուզման մեջ գտնվելու պայմաններում, փոխել են անհատական տվյալները՝ ստանալով անձնագիր:

10. Ուսումնասիրությամբ հայտնաբերվել է քրեական գործի կորստյան 1 դեպք:

11. Ստուգումներով հայտնաբերվել է 1 հետախուզական գործ, որում որևէ փաստաթուղթ, բացի քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշումից, չկա:

12. Ուսումնասիրությամբ 1 հետախուզական գործով հայտնաբերվել է առերևույթ կեղծիքներ կատարելու դեպք: Այսպես՝

Արագածոտնի մարզի դատախազությունից ստացված տվյալների համաձայն՝ թիվ 61200894 քրեական գործով հետախուզվող Թորգոմ Վանիչկայի Չարչյանը 10.04.1994թ. ներգրավվել է որպես մեղադրյալ՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի **203.1** հոդվածով, որպես խափանման միջոց է կիրառվել **կալանքը**: Նույն օրը որոշում է կայացվել վերջինիս նկատմամբ հետախուզում հայտարարելու վերաբերյալ: 02.05.2005թ. որոշմամբ արարքը համապատասխանեցվել է ՀՀ քրեական օրենսգրքի **354-րդ** հոդվածին:

05.03.2013թ. նոր միայն կազմվել է թիվ 29408913 հետախուզական գործը, որում հետախուզվողի անձը հաստատող փաստաթղթի ուսումնասիրությամբ առերևույթ առկա են

փաստաթղթի՝ օտարերկրյա պետություններում վավերականության ժամկետի տվյալների փոփոխության մասին վկայող հատկանիշներ:

Այս գործով հետախուզվողը 23.06.2007թ. լքել է ՀՀ պետական սահմանը:

Հայտնաբերված ընդհանուր բնույթի խախտումներն են՝

1.Քննիչի կողմից հետաքննության մարմնին չեն ուղարկվել հետախուզում իրականացնելու համար պարտադիր համարվող փաստաթղթերը:

2. Առանձին դեպքերում արձանագրվել է, որ հետախուզական գործերում առկա չեն մեղադրյալի նկատմամբ միջպետական կամ միջազգային հետախուզում հայտարարելու մասին որոշումներ:

3. Առանձին դեպքերում մեղադրյալի նկատմամբ միջազգային հետախուզում չի հայտարարվել, քանի որ հետաքննության մարմինը քննիչից պահանջել է ներկայացնել օտար լեզվով թարգմանված փաստաթղթեր, սակայն դրանք չեն ներկայացվել:

4.Հետաքննության մարմինը հետախուզվող մեղադրյալի նկատմամբ հետախուզական գործ կազմելու մասին որոշման վերաբերյալ (հիմնականում նախկին տարիներին կազմված գործերով) կամ ընդհանրապես կամ եռօրյա ժամկետում գրավոր չի տեղեկացրել քննիչին, հետախուզվող անձի վերաբերյալ չի լրացրել հետախուզական վիճակագրական քարտ և հետախուզվողի լուսանկարի ու անձը հաստատող փաստաթղթերի պատճենների հետ չի ներկայացրել ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն:

5.Արձանագրվել են դեպքեր, երբ հետախուզում հայտարարելու մասին քննիչի որոշման հիման վրա կազմվել են հետախուզական գործեր, սակայն դրանք չեն հաշվառվել հետախուզության ստորաբաժանման հաշվառման մատյանում:

6. Հետախուզվողների կողմից ՀՀ սահմանը հատելու հանգամանքը պարզելու նպատակով հետաքննության մարմնի կողմից չեն ստուգվել հետախուզվողների վերաբերյալ ՀՀ ՍԷԿՏ համակարգում առկա տվյալները:

7. Հետախուզական գործերի և ՀՀ ոստիկանության ԻԿ տվյալների մեջ որոշ դեպքերում առկա են քրեական գործերի համարների անճշտություններ:

8. Թաքնվող կամ գտնվելու վայրը չպարզված մեղադրյալներին հայտնաբերելու ուղղությամբ բավարար միջոցներ չեն ձեռնարկվել նաև նախաքննական մարմինների կողմից, անտեսվել է հետաքննության մարմնի միջոցով կամ անձամբ մեղադրյալի գտնվելու տեղը պարզելու կամ քննությունից խուսափող մեղադրյալին հետախուզելու ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտությունը:

9. Կատարված ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ մի շարք գործերով անձինք շարունակել են մնալ հետախուզման մեջ այնպիսի արարքների կատարման համար, որոնք ապաքրեականացվել են, կամ հետախուզվողների մեղադրանքը գործող քրեական օրենսգրքին չի համապատասխանեցվել, անձանց նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց շարունակել է մնալ ընտրված նախկին կարգավորումներին համապատասխան՝ առանց դատարանի համապատասխան որոշման: Ավելին, ուսումնասիրությամբ պարզվել է նույնիսկ, որ մահացած անձը քրեական գործով անցնում է որպես հետախուզվող:

Կոլեգիան փաստում է, որ 8-րդ և 9-րդ կետերում նշված խախտումների պատճառ կարող է լինել այն, որ, արձակուրդի մեկնելիս կամ այլ աշխատանքի տեղափոխվելիս, քննիչները

վարույթները կասեցված գործերն այլ քննիչների փաստացի հանձնում են չհրկիզվող պահարաններով, և այդ գործերով, որպես կանոն, որևէ գործողություն չի կատարվում:

10. Ուսումնասիրությունները ցույց են տվել նաև, որ գործնականում տարբերություն չի դրվում մեղադրյալի՝ քննությունից թաքնվելու կամ այլ պատճառներով նրա գտնվելու վայրը պարզված չլինելու, ինչպես նաև ՀՀ սահմաններից դուրս գտնվելու հիմքերի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետեր) միջև: Ավելին՝ հաճախ գործերով վարույթը կասեցնելու մասին որոշումներում վկայակոչվում է թե՛ մեղադրյալների քննությունից թաքնվելու, և թե՛ նրանց գտնվելու վայրն այլ պատճառներով պարզված չլինելու մասին:

Կոլեգիան փաստում է, որ թեև մեղադրյալի՝ քննությունից թաքնվելու և նրա գտնվելու վայրը պարզված չլինելու հիմքերն ամրագրված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում, սակայն դրանք քրեական գործով վարույթի կասեցման հարաբերականորեն ինքնուրույն հիմքեր են հանդիսանում, հետևաբար՝ քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշում կայացնելիս, հիմք ընդունելով նախաքննությամբ ձեռք բերված փաստական տվյալները, յուրաքանչյուր դեպքում պետք է հստակեցնել, թե այդ հիմքերից որն է առկա:

«Թաքնվել» ասելով պետք է հասկանալ քննությունից խուսափելու ակտիվ ձև: Քննությունից թաքնվելու դեպքում մեղադրյալի գործողությունները կրում են գիտակցական, դիտավորյալ բնույթ և հատուկ ուղղված են իրեն հայտնաբերելու գործընթացի դժվարացմանը:

Մեղադրյալի գտնվելու վայրն այլ պատճառով պարզված չլինելու տակ պետք է հասկանալ այնպիսի օբյեկտիվ հանգամանքներ, որոնք հնարավորություն չեն տալիս քննիչին ստանալու տեղեկություններ մեղադրյալի գտնվելու վայրի վերաբերյալ, պայմանով, որ վերջինս չի իրականացրել դիտավորյալ, ակտիվ գործողություններ՝ քրեական պատասխանատվությունից խուսափելու համար:

Ընդ որում, այդ հիմքերի տարանջատումն ունի կարևոր քրեաիրավական և քրեադատավարական նշանակություն: Այսպես, երբ գործով վարույթը կասեցվում է այն պատճառաբանությամբ, որ մեղադրյալը թաքնվում է քննությունից կամ դատից, ապա այս դեպքում գործի վարույթը կասեցնելու հետ միաժամանակ կասեցվում է նաև քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը, քանի որ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 4-րդ մասի՝ վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, երբ անձը խուսափում է քննությունից կամ դատից: Իսկ գործով վարույթը մեղադրյալի գտնվելու վայրը այլ պատճառով պարզված չլինելու հիմքով կասեցնելու դեպքում միաժամանակ չի կասեցվում քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը, քանի որ մեղադրյալի գտնվելու վայրը չպարզելը չի կարող մեկնաբանվել, որ նա թաքնվում է քննությունից, և հետևաբար չի կարող քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը կասեցնելու հիմք հանդիսանալ:

Մեղադրյալի՝ քննությունից թաքնվելու հանգամանքն ունի նաև կարևոր քրեադատավարական նշանակություն: Նախ՝ նշված հանգամանքը կարող է մեղադրյալի նկատմամբ ավելի խիստ խափանման միջոց կիրառելու հիմք հանդիսանալ:

Կոլեգիան նշում է, որ գործնականում հաճախ մեղադրյալի՝ ՀՀ սահմաններից դուրս գտնվելու հիմքը նույնացվում է նրա քննությունից թաքնվելու հետ և անձի նկատմամբ հայտարարվում է հետախուզում: Պետք է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին

մասի 2-րդ և 4-րդ կետերում տեղ գտած հիմքերի ընդհանուր տրամաբանությունից հետևում է, որ հանրապետության սահմաններից դուրս մեղադրյալի գտնվելը չպետք է հանդիսանա քննությունից խուսափելու հետևանք, հակառակ դեպքում քրեական գործով վարույթը պետք է կասեցվի՝ մեղադրյալի քննությունից թաքնվելու հիմքով:

Ելնելով վերոգրյալից, կոլեգիան նշում է, որ ՀՀ սահմաններից դուրս մեղադրյալի գտնվելու հիմքով քրեական գործով վարույթը կասեցնելու համար միաժամանակ պարտադիր կարգով պետք է առկա լինեն հետևյալ պայմանները.

ա) մեղադրյալը պետք է գտնվի ՀՀ սահմաններից դուրս, ընդ որում՝ ՀՀ սահմաններից դուրս գտնվելը չպետք է քննությունից խուսափելու նպատակ հետապնդի,

բ) առանց մեղադրյալի մասնակցության հետագա քրեական վարույթը պետք է անհնար լինի:

Կոլեգիան նշում է նաև, որ ուսումնասիրության արդյունքում ի հայտ են եկել հետախուզական աշխատանքների կատարման ոլորտը կարգավորող իրավական նորմերում առկա մի շարք թերություններ: Այսպես,

ՀՀ ոստիկանության կողմից հետախուզական աշխատանքների իրականացման կարգը սահմանող ենթաօրենսդրական ակտով սահմանված է, որ հետախուզվող մեղադրյալի նկատմամբ հետախուզական գործ կազմելու մասին որոշման վերաբերյալ հետաքննության մարմինը պետք է եռօրյա ժամկետում գրավոր տեղեկացնի քննիչին:

Նշված դատավարական բնույթի պարտականությունը նախատեսված է ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, այլ ՀՀ կառավարության համապատասխան որոշումով:

Բացի դրանից, ՀՀ ոստիկանության կողմից հետախուզական աշխատանքների իրականացման կարգը սահմանող ենթաօրենսդրական ակտով սահմանված է նաև, որ քննիչը քրեական գործ հարուցելու մասին, անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, հետախուզում հայտարարելու և խափանման միջոց ընտրելու վերաբերյալ որոշումների պատճենները, հետախուզվողի դատվածության ստուգման պահանջագիրը, հետախուզվողի անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի պատճենը երկօրյա ժամկետում ուղարկում է հետախուզական ստորաբաժանում: Հետախուզական գործերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ գրեթե բոլոր գործերով քրեական գործ հարուցելու մասին որոշումը, հետախուզվողի դատվածության ստուգման պահանջագիրը, հետախուզվողի անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի պատճենը քննիչների կողմից չեն ուղարկվել հետախուզական ստորաբաժանում:

Քննիչների կողմից այդ փաստաթղթերը հետաքննության մարմնին չուղարկելը պայմանավորված է վերջինիս՝ օրենքով որևէ պարտականություն չունենալով: Նշենք նաև, որ տվյալ ակտի բովանդակությանը, այդ ակտի հրապարակայնության սահմանափակ աստիճանով պայմանավորված, քննիչը նույնիսկ ծանոթ չէ:

Ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են անձանց նկատմամբ հետախուզումը դադարեցնելու չհիմնավորված դեպքեր, իսկ այդ կապակցությամբ հետախուզական աշխատանքների նկատմամբ ըստ էության հսկողություն իրականացնելու պարտականություն ունեցող դատախազը չի իրազեկվել: Գործող կարգավորումների համաձայն՝ մեղադրյալի նկատմամբ հետախուզումը դադարեցնելու մասին ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն ուղարկվող քարտերը ստորագրվում են ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանման պետի կողմից, իսկ քննիչի և դատախազի կողմից՝ ոչ:

Ուշադրության է արժանացել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում որոշակի փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը ևս: Այսպես.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 204-րդ հոդվածի համաձայն՝ եթե նախաքննություն կատարելիս ծագում է առաջադրված մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու անհրաժեշտություն, քննիչը պարտավոր է կրկին մեղադրանք առաջադրել՝ պահպանելով սույն օրենսգրքի 202-րդ և 203-րդ հոդվածներով սահմանված պահանջները: Եթե նախաքննության ընթացքում առաջադրված մեղադրանքի որևէ մասը չի հաստատվում, քննիչն իր որոշմամբ առաջադրված մեղադրանքի այդ մասը վերացնում է և այդ մասին հայտարարում մեղադրյալին:

Նախաքննության կատարման ժամանակ մեղադրյալին հետախուզում հայտարարելու դեպքում, երբ քննության հետագա փուլում պարզվում են այնպիսի փաստական տվյալներ, որոնք հիմք են տալիս մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 204-րդ հոդվածով սահմանված կարգով համապատասխան որոշումներ կայացնելու հնարավորության հարցի առնչությամբ գործնականում տրվում են տարբեր մեկնաբանություններ:

Կոլեգիան նշում է, որ տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու նպատակով նշված հոդվածը վերանայման անհրաժեշտություն ունի:

Ելնելով վերոգրյալից.

Կոլեգիան որոշում է՝

1. ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Ա.Հարությունյանին՝

1) Առանձնացնել ուսումնասիրված քրեական և հետախուզական գործերով հայտնաբերված էական բնույթի այն խախտումները, որոնցով վարույթն իրականացրած մարմինների գործողությունները սահմանված կարգով ստուգելու և քրեաիրավական գնահատական տալու անհրաժեշտություն է առաջացել և դրանցով զեկուցագրեր ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին:

2) Հայտնաբերված այն խախտումներով, որոնցով քրեական գործ հարուցելու հիմքերը բացակայում են կամ առկա է քրեադատավարական արգելք, 10-օրյա ժամկետում նախապատրաստել և ՀՀ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալին ստորագրման ներկայացնել ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ վարույթն իրականացրած մարմինների վերադաս մարմիններին հասցեագրված միջնորդագրերի նախագծեր:

3) Ամփոփման արդյունքներով 10-օրյա ժամկետում նախապատրաստել և ՀՀ գլխավոր դատախազին ստորագրման ներկայացնել ՀՀ տարածքում ՀՀ ոստիկանության և ՀՀ ռազմական ոստիկանության կողմից հետախուզման փաստացի իրականացման իրական վիճակը վեր հանելու, հետախուզական աշխատանքները, դրանց իրականացման մեթոդիկան ու տակտիկան իրական գնահատելու, խախտումները բացառելու, հետախուզական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ լուծումներ առաջ քաշելու նպատակով ուսումնասիրություն կատարելու և արդյունքների մասին ՀՀ դատախազությանը հայտնելու վերաբերյալ ՀՀ ոստիկանության պետին հասցեագրված գրության նախագիծ:

4) Ամփոփման արդյունքներով 10-օրյա ժամկետում նախապատրաստել և ՀՀ գլխավոր դատախազին ստորագրման ներկայացնել տարբեր քրեական գործերով հետախուզվողներին հայտնաբերելիս, առանց վերջիններիս այդ գործերից յուրաքանչյուրով վարույթն իրականացնող մարմինների տրամադրությանը հանձնելու, հետախուզումը դադարեցնելու և այդ անձի վերաբերյալ կազմված հետախուզական գործը կարճելու պրակտիկան բացառելու, ինչպես նաև հետախուզական աշխատանքների իրականացման կարգը սահմանող իրավական ակտերի պահանջներն անշեղորեն կատարելն ապահովելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ ՀՀ ոստիկանության պետին հասցեագրված գրության նախագիծ:

5) Ամփոփման արդյունքներով 10-օրյա ժամկետում նախապատրաստել և ՀՀ գլխավոր դատախազին ստորագրման ներկայացնել արձակուրդի մեկնող կամ այլ աշխատանքի տեղափոխվող քննիչների կողմից քրեական գործերն այլ քննիչների հանձնելու և վերջիններիս կողմից ընդունելու արդյունավետ ընթացակարգ մշակելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու և ՀՀ գլխավոր դատախազությանը հայտնելու նպատակով նախաքննություն իրականացնող մարմինների ղեկավարներին հասցեագրված գրությունների նախագծեր:

6) Ամփոփման արդյունքներով 10-օրյա ժամկետում նախապատրաստել և ՀՀ գլխավոր դատախազին ներկայացնել քննիչների կողմից հետախուզում հայտարարելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո երկօրյա ժամկետում քրեական գործ հարուցելու, անձին որպես մեղադրյալ ներգրավելու, հետախուզում հայտարարելու և խափանման միջոց ընտրելու վերաբերյալ որոշումների պատճենները, հետախուզվողի և նրա կապերի մասին տեղեկանքը, հետախուզվողի դատվածության ստուգման պահանջագիրը, հետախուզվողի անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի պատճենը հետաքննության մարմնին ուղարկելու պարտականություն սահմանելու նպատակով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում նախաձեռնելու առաջարկության նախագիծ:

Նույն ժամկետում նախապատրաստել և ՀՀ գլխավոր դատախազին ներկայացնել մինչև համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարումն առաջարկվող փոփոխությունը գործնականում կիրառելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու նպատակով ՀՀ-ում նախաքննություն իրականացնող մարմինների ղեկավարներին հասցեագրված գրությունների նախագծեր:

7) Ամփոփման արդյունքներով 10-օրյա ժամկետում նախապատրաստել և ՀՀ գլխավոր դատախազին ներկայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով հետաքննության մարմնի համար հետախուզական գործ կազմելու մասին եռօրյա ժամկետում քննիչին տեղեկացնելու պարտականություն սահմանելու նպատակով օրենսդրական փոփոխություն նախաձեռնելու առաջարկության վերաբերյալ ՀՀ ոստիկանության պետին հասցեագրված գրության նախագիծ:

Նույն ժամկետում նախապատրաստել և ՀՀ գլխավոր դատախազին ներկայացնել մինչև համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարումը, հետաքննության մարմնի կողմից հետախուզական գործ կազմելու վերաբերյալ եռօրյա ժամկետում քննիչին տեղեկացնելու նպատակով միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ հետախուզական աշխատանքներ իրականացնող մարմինների ղեկավարներին հասցեագրված գրությունների նախագծեր:

8) Ամփոփման արդյունքերով 10-օրյա ժամկետում նախապատրաստել և ՀՀ գլխավոր դատախազին ներկայացնել հետախուզվող անձի հայտնաբերման դեպքում հետաքննության

մարմնի կողմից վարույթն իրականացնող մարմնին գրավոր և բանավոր կարգով անհապաղ իրազեկելու, հայտնաբերված հետախուզվողին վարույթն իրականացնող մարմնի տրամադրությանը հանձնելուց հետո միայն հետախուզումը դադարեցնելու և հետախուզական գործը կարճելու, ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն կամ քրեական հետախուզության գլխավոր վարչություն ուղարկվող, հետախուզումը դադարեցնելու և հետախուզական գործը կարճելու վերաբերյալ որոշումների ուղեկցական գրության օրինակները նախաքննության մարմնին և դատախազին ուղարկելու վերաբերյալ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հետախուզական աշխատանքների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի թիվ 857-Ն Գ որոշման մեջ փոփոխություն նախաձեռնելու առաջարկության վերաբերյալ ՀՀ ոստիկանության պետին հասցեագրված գրության նախագիծ:

Նույն ժամկետում նախապատրաստել և ՀՀ գլխավոր դատախազին ներկայացնել առաջարկվող փոփոխությունը գործնականում կիրառելու վերաբերյալ ՀՀ ոստիկանության պետին հասցեագրված գրության նախագիծ:

9) Ամփոփման արդյունքերով 10-օրյա ժամկետում նախապատրաստել և ՀՀ գլխավոր դատախազին ներկայացնել ՀՀ ռազմական ոստիկանության ստորաբաժանումների կողմից վարվող հետախուզական գործերը մինչև 2018 թվականի հունվարի 1-ը ՀՀ ոստիկանությանը հանձնելու վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարին հասցեագրված գրության նախագիծ

2. **ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերով, հատկապես կարևոր գործերով քննության, կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունների պետերին, ՀՀ ՔԿ ԶՔԳՎ ՀԿԳ քննության վարչությունում քննվող գործերի բաժնի պետին, կայազորների զինվորական դատախազներին, ՀՀ մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազներին՝**

1) Կիսամյակը մեկ անգամ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում հաշվառված հետախուզվողների տվյալները համեմատել փաստացի հետախուզման մեջ գտնվող անձանց վերաբերյալ քննչական մարմիններում առկա տվյալների հետ, անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում ձեռնարկել դատախազական ներգործության միջոցներ՝ առկա թերությունների պատճառները պարզելու և վերացնելու ուղղությամբ:

2) Կիսամյակը մեկ անգամ ուսումնասիրել հետախուզվողների հայտնաբերման ուղղությամբ կոնկրետ տարածքներում ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների աշխատանքի վիճակը, այդ աշխատանքում տեղ գտած թերություններ, բացթողումներ հայտնաբերելու, ինչպես նաև հետախուզական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով միջնորդագրեր ներկայացնել ոստիկանությանը:

3) Բացառել դատախազների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով քրեական գործերով վարույթը կասեցնելու մասին որոշումների օրինականությունը ստուգելիս ձևական հանձնարարություններ տալու գործելաոճը, ապահովել, որ հետախուզվողներին, հատկապես ծանր և առանձնապես ծանր հանցանքի կատարման համար հետախուզվողներին հայտնաբերելու նպատակով,

կոնկրետ գործերի փաստական տվյալներով պայմանավորված, նախաքննական մարմիններին տրվեն կոնկրետ գործողություններ կատարելու վերաբերյալ ցուցումներ:

4) Ապահովել, որպեսզի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով կասեցված քրեական գործերով հետախուզվողներին հայտնաբերելու ուղղությամբ քննիչների կողմից կատարվեն քննչական գործողություններ, մասնավորապես, հարցաքննվեն տուժողները, հետախուզվողի ընտանիքի անդամները և այլն: Բացի դրանից, փնտրողական աշխատանքները ակտիվացնելու նպատակով, պարբերաբար, հետաքննության մարմիններին տալ բովանդակային հանձնարարություններ և վերահսկել դրանց կատարման ընթացքը:

5) Բացառել դատախազների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով այնպիսի քրեական գործերով վարույթը կասեցնելու մասին որոշումների օրինականությունը հաստատելը, որոնցում բացակայում են հետախուզական գործ կազմելու վերաբերյալ հետաքննության մարմնի կողմից նախաքննական մարմնին հայտնելու մասին տվյալները:

6) Ապահովել, որպեսզի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով քրեական գործերով վարույթը կասեցնելու մասին որոշումներում հստակ տարանջատվեն մեղադրյալի քննությունից թաքնվելու և նրա գտնվելու վայրը պարզված չլինելու հիմքերը:

«Թաքնվել» ասելով պետք է հասկանալ քննությունից խուսափելու ակտիվ ձև: Քննությունից թաքնվելու դեպքում մեղադրյալի գործողությունները կրում են գիտակցական, դիտավորյալ բնույթ և հատուկ ուղղված են իրեն հայտնաբերելու գործընթացի դժվարացմանը:

Մեղադրյալի գտնվելու վայրն այլ պատճառով պարզված չլինելու տակ պետք է հասկանալ այնպիսի օբյեկտիվ հանգամանքներ, որոնք հնարավորություն չեն տալիս քննիչին ստանալու տեղեկություններ մեղադրյալի գտնվելու վայրի վերաբերյալ, պայմանով, որ վերջինս չի իրականացրել դիտավորյալ, ակտիվ գործողություններ՝ քրեական պատասխանատվությունից խուսափելու համար:

3. Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ Ա.Մարուխյանին՝

1) 10-օրյա ժամկետում նախապատրաստել «ՀՀ դատախազության համակարգում դատախազների տարեկան աշխատանքների արդյունքների ամփոփման սահմաններն ընդգծելու և տարեկան աշխատանքների մասին և զեկուցագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» ՀՀ գլխավոր դատախազի 27.12.2013թ. № 121 հրամանին կից հավելվածում հետախուզական աշխատանքների վիճակի վերաբերյալ առանձին պարբերություն նախատեսելու նպատակով լրացում կատարելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի հրամանի նախագիծ:

2) 10-օրյա ժամկետում նախապատրաստել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 204-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ և այն ուղարկել ՀՀ կառավարություն:

3) 10-օրյա ժամկետում նախապատրաստել և ՀՀ գլխավոր դատախազին ներկայացնել «ԱՊՀ մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին» պայմանագրի իրականացման համար իրավասու մարմիններ նշանակելու մասին ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի 24.08.2017թ. 1037-Ա որոշման մեջ «և

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանությունը» արտահայտությունը հանելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

4) Կիսամյակը մեկ անգամ ստուգել ՀՀ դատախազության ստորաբաժանումների կողմից սույն որոշման 2-րդ կետի կատարման վիճակը և ստուգման արդյունքները տեղեկանքով ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին:

2. Լսեցին ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Ա.Հարությունյանին և մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ Գ.Բաղդասարյանին:

Արտահայտվեցին՝ Հ.Ասլանյանը, Դ.Մելքոնյանը, Ա.Հարությունյանը, Կ.Բիշարյանը, Ա.Աֆանդյանը, Ա.Մարտիրոսյանը, Դ.Կարապետյանը, Կ.Արեյանը, Վ.Տերտերյանը և Թ.Պետրոսյանը:

Լսելով և քննարկելով 2016 թվականի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի նախաքննության նկատմամբ իրականացված դատախազական հսկողության և դատավարական ղեկավարման, ինչպես նաև մեղադրանքի պաշտպանության վիճակի վերաբերյալ **ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Ա.Հարությունյանի և մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ Գ.Բաղդասարյանի** զեկույցները՝ ՀՀ դատախազության կոլեգիան նշում է, որ 2016թ. արձանագրված՝ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների տեսակարար կշռում բնակարանային գողությունների քանակը զգալի է, այն է՝ արձանագրված 7741 դեպքից 1252-ը կամ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների 16.1%-ը եղել են բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողության դեպքեր:

Չնայած զգալի քանակին, այնուամենայնիվ, 2016թ. արձանագրված բնակարանային գողությունների դեպքերը 2015թ. համեմատ նվազել են. 2016թ. արձանագրվել է բնակարանային գողության 1252 դեպք՝ 2015թ. արձանագրված 1369 դեպքի դիմաց, այսինքն՝ բնակարանային գողությունների դեպքերը նվազել են 117-ով կամ 8.5%-ով:

Դրան զուգահեռ, բնակարանային գողությունների բացահայտման հանրապետական միջին ցուցանիշը 2016թ. աճել է՝ կազմելով 33%՝ 2015թ. արձանագրված 30.5%-ի դիմաց:

Բնակարան ապօրինի մուտք գործելով գողություն կատարելու դեպքերի առթիվ 2016թ. նախապատրաստվել է 521 նյութ, որոնցից 483-ը՝ նախաքննության, 38-ը՝ հետաքննության մարմնի կողմից:

Նախապատրաստված 521 նյութից 482-ով հարուցվել է քրեական գործ, 39-ով քրեական գործ հարուցելը մերժվել է, ընդ որում, նախապատրաստված 37 նյութով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում է կայացվել արդարացման, 2-ով՝ ոչ արդարացման հիմքով, երբ վարույթն իրականացնող մարմինը գտել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործ հարուցվել չի կարող, քանի որ բացակայում է դիմողի բողոքը: Վարույթն իրականացնող մարմնի հիշյալ դիրքորոշումը հսկող դատախազի կողմից համարվել է անհիմն, որպիսի պատճառաբանությամբ հսկող դատախազների կողմից կայացվել են

որոշումներ՝ վերոհիշյալ երկու նյութով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումները վերացնելու և ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով քրեական գործ հարուցելու վերաբերյալ:

Բնակարան ապօրինի մուտք գործելով գողություն կատարելու դեպքերի վերաբերյալ 2016թ. նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումներից 3-ը բողոքարկվել է վերադաս դատախազին, 2 դեպքում կայացվել են որոշումներ՝ բողոքը մերժելու մասին, 1 դեպքով վերադաս դատախազը կայացրել է որոշում՝ բողոքը բավարարելու, այն է՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելու և ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով քրեական գործ հարուցելու վերաբերյալ:

Բնակարան ապօրինի մուտք գործելով գողություն կատարելու դեպքերի առթիվ 2016թ. հարուցվել է 1202 քրեական գործ, նախորդ տարիներից փոխանցվել է 232 քրեական գործ, նախորդ տարիների ընթացքում վարույթը կասեցված քրեական գործերից 2016թ. վերսկսվել է 25 քրեական գործով վարույթ:

ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով հարուցված քրեական գործերից 9-ը 2016թ. կարճվել է, բոլորը էլ արդարացման հիմքով:

Բնակարան ապօրինի մուտք գործելով գողություն կատարելու դեպքերի վերաբերյալ հարուցված քրեական գործերով 2016թ. որպես մեղադրյալ է ներգրավվել 198 անձ, որոնցից 83-ի նկատմամբ 2016թ. որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով որպես մեղադրյալ ներգրավված անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 7 միջնորդություն 2016թ. դատարանի կողմից մերժվել է, հիշյալ դատական ակտերից բողոքարկվել են 3-ը, 1 բողոք բավարարվել է, 2-ը՝ մերժվել:

ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով որպես մեղադրյալ ներգրավված 5 անձի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը 2016թ. փոխարինվել է գրավով, նշված դատական ակտերից բողոքարկվել են 3-ը, որոնցից 1-ը բավարարվել է, 2-ը՝ մերժվել:

2016թ. մեղադրական եզրակացությամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետի մեղադրանքով դատարան է ուղարկվել 110 քրեական գործ՝ 151 անձի վերաբերյալ: Նշված գործերով հիմնավորված նյութական վնասի ընդհանուր չափը կազմել է 120.616.665 ՀՀ դրամ:

Բնակարան ապօրինի մուտք գործելով գողություն կատարելու դեպքերի առթիվ հարուցված 891 քրեական գործով վարույթ 2016թ. կասեցվել է, ընդ որում, նշված քրեական գործերից 889-ի կամ 99,7%-ի վարույթը կասեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

Բնակարան ապօրինի մուտք գործելով գողություն կատարելու՝ 2016թ. արձանագրված դեպքերից 77-ը կատարվել է նախնական համաձայնության խմբի կողմից, նույն ժամանակահատվածում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով նախատեսված արարք կատարած անձանցից 39-ը նախկինում դատված է եղել, ընդ որում, նշված 39 անձից 29-ը նախկինում դատապարտվել է համասեռ հանցագործություն կատարելու համար:

Ինչ վերաբերում է հանցանք կատարած անձանց սեռին ու տարիքին, ապա 2016թ. բնակարանային գողություն կատարած 198 անձից 192-ը կամ 96.9%-ը եղել է տղամարդ, 6-ը կամ 3.1%-ը՝ կին, հանցանք կատարելու պահին անչափահաս է եղել 25-ը կամ 12.6%-ը:

Բնակարանային գողություն կատարած չափահաս անձինք հիմնականում աշխատանք չեն ունեցել կամ, առանձին դեպքերում, կատարել են բանվորական աշխատանքներ, զբաղվել են հողագործությամբ, անասնապահությամբ, իսկ անչափահասներն հիմնականում (բացառությամբ 7 անչափահասի) ընդգրկված են եղել ուսումնական հաստատություններում:

Ինչ վերաբերում է բնակարանային գողություն կատարած անձանց կրթական մակարդակին, ապա այդ անձանց ճնշող մեծամասնությունն ունեցել է միջնակարգ կրթություն:

2016թ. Երևան քաղաքում արձանագրված բնակարանային գողությունների մեծ մասը կատարվել է բազմաբնակարան շենքերի բնակարաններից, ինչը կարելի է բացատրել մայրաքաղաքում բազմաբնակարան շենքերի՝ առանձնատների համեմատ գերակշռությամբ:

Ի տարբերություն Երևան քաղաքի, 2016թ. մարզերում արձանագրված բնակարանային գողություններն հիմնականում կատարվել են առանձնատներից:

2016թ. արձանագրված բնակարանային գողություններից 565-ը կամ 45.1%-ը կատարվել է գիշերային ժամին՝ ժամը 22^{00}-ից մինչև 07^{00}-ն ընկած ժամանակահատվածում, 500-ը կամ 39.9%-ը՝ ցերեկը, իսկ 187 դեպքով (14.9%) հնարավոր չի եղել հստակ պարզել հանցագործության կատարման կոնկրետ ժամանակահատվածը:

2016թ. արձանագրված բնակարանային գողությունները կատարվել են թե՛ տեխնիկական միջոցների գործադրմամբ պատուհանների փեղկերը, մուտքի դռները բացելու, թե՛ հարմարեցված բանալիով դռները բացելու միջոցով: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ ապօրինի բնակարան են մուտք գործել տեխնիկական միջոցների գործադրմամբ պատը քանդելու միջոցով կամ ապօրինի մուտք են գործել բնակարան չկողպված դռներից կամ պատուհանից՝ օգտվելով տուժողների անփութությունից:

2016թ. արձանագրված բնակարանային գողություններն հիմնականում կատարվել են առանց հանցավորի կողմից տուժողի նյութական վիճակի մասին տեղեկություններ ունենալու, առանց հանցագործությունը նախապատրաստելու:

Միաժամանակ, պարզվել է, որ նյութապես ապահովված անձանց բնակարաններից գողություն կատարելուն, որպես կանոն, նախորդել է հանցագործության պլանավորումը, այդպիսի հանցագործություններն հիմնականում կատարվել են հանցակցությամբ, այն է՝ կոնկրետ անձի դրդչությամբ կամ օժանդակությամբ, առավելապես՝ նախնական համաձայնության խմբի կողմից:

Հիմնականում հափշտակության առարկա հանդիսացել են դրամը, ոսկյա և արծաթյա զարդերը, թանկարժեք քարերը, կենցաղային տեխնիկան, բջջային հեռախոսները, իսկ հափշտակված առարկաները, որպես կանոն, իրացվել են մանրածախ վաճառքի կետերում, շուկաներում: Ոսկյա և արծաթյա զարդերի՝ գողության առարկա հանդիսանալու պարագայում սակավ չեն այն դեպքերը, երբ գողոնը գրավադրվել է բանկում կամ գրավատանը:

Վերլուծությամբ փաստվել է, որ հանցագործության այս տեսակի կատարման հիմնական պատճառի դերում շարունակում է հանդես գալ հանցանք կատարած անձանց ցածր կենսամակարդակը, այլ կերպ՝ այս հանցագործությունը, որպես կանոն, կատարվում է՝ նյութական կարիքից դրդված:

Միաժամանակ, նույնն են մնացել նաև բնակարան ապօրինի մուտք գործելով գողություն կատարելուն նպաստող պայմանները՝ բնակարանի դռան կամ պատուհանների անբավարար տեխնիկական ապահովվածությունը (հնամաշությունը), բնակարանի դուռը՝ կողպված, իր բացակայությամբ բնակարանի պատուհանները փակված լինելու հարցերի կապակցությամբ անձի անուշադրությունը, օպերատիվ ծառայությունների ոչ լիարժեք բավարար աշխատանքը՝ հատկապես նախկինում նույնաբնույթ կամ համասեռ հանցանք կատարած անձանց մշտապես օպերատիվ տեսադաշտում պահելու հարցի հետ կապված:

Կոլեգիան փաստում է, որ որպես բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողության դեպքի քննության հիմնական թերություն շարունակում է մնալ նշված դեպքերով դեպքի վայրի զննությունը պատշաճ չկատարելը: Մասնավորապես, սակավ չեն դեպքերը, երբ դեպքի վայրը զննվում է սահմանափակ կերպով, այսինքն, որպես կանոն, զննվում է բնակարանի ներսը և անտեսվում է այն, որ բնակարանին հարակից տարածքների զննությունը նույնպես կարևոր է՝ նկատի ունենալով գողոնի տեղափոխման կամ հանցանք կատարած անձի մուտքի և ելքի ուղղությունները պարզելու անհրաժեշտությունը:

Դեպքի վայրի զննությամբ խիստ սակավ դեպքերում են հայտնաբերվում և վերցվում մազի, քրտինքի կամ հանցանք կատարած անձին անհատականացնող այլ հետքեր, ինչը վկայում է այն մասին, որ այդպիսի հետքեր հայտնաբերելուն ուղղված գործողություններ դեպքի վայրում գրեթե չեն նախաձեռնվում:

Կոլեգիան փաստում է նաև, որ բնակարանային գողության դեպքերով շարունակում են հանդիպել իրավիճակներ, երբ անձին առաջադրված մեղադրանքի հիմքում դրվում են նրա ինքնախոստովանական ցուցմունքը և դրա հիման վրա կատարված կամ դրանից ածանցյալ՝ դեպքի վայրի զննության կամ քննչական փորձարարության արդյունքները, ինչը չի կարող համարվել բավարար՝ հանցագործության կատարման մեջ անձի մեղքը լիարժեք ապացուցված համարելու տեսանկյունից:

Ըստ ՀՀ դատախազության ստորաբաժանումներից ստացված տվյալների՝ 2016 թվականի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ուղարկվել 128 գործ՝ 187 անձի վերաբերյալ *(2015թ.՝ 136 գործ՝ 194 անձի վերաբերյալ)*, որոնցից մեղադրական եզրակացությամբ 126 գործ՝ 185 անձի վերաբերյալ, իսկ 2 գործ՝ 2 անձի վերաբերյալ բժշկական բնույթի հարկադրական միջոց կիրառելու միջնորդությամբ: *(2015թ. մեղադրական եզրակացությամբ 135 գործ՝ 193 անձի նկատմամբ, իսկ 1 գործ՝ 1 անձի վերաբերյալ բժշկական բնույթի հարկադրական միջոց կիրառելու միջնորդությամբ)*:

Նշված մեղադրանքով դատարաններում քննվել և ավարտվել է 118 քրեական գործ՝ 164 անձի վերաբերյալ *(2015թ.՝ 115 քրեական գործ՝ 146 անձի նկատմամբ)*, որոնցից 109-ով դատապարտվել է 153 անձ *(2015թ. ընթացքում 113 գործով դատապարտվել է 134 անձ)*, իսկ 2 գործով 2 անձի նկատմամբ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոց *(2015թ՝. 1 գործ՝ 1 անձ)*:

Դատապարտված անձանցից 23-ը կամ 15%-ը եղել են անչափահասներ, 8-ը կամ 5.2%-ը կանայք, 28-ը կամ 18.9%-ը նախկինում դատված, որոնցից 25-ը կամ 16.3%-ը համասեռ հանցագործության համար: Նշված 25 անձանցից 17-ը դատապարտված է եղել գողությունների համար (5-ի դատվածությունը եղել է մարված), որոնցից 11-ը նախկինում դատապարտված են եղել բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողությունների համար, այդ թվում՝ 1

անձ դատապարտված է եղել ՌԴ և ՈՒՀ քրեական օրենսգրքերով, 2-ի դատվածությունը եղել է մարված: Բնակարանային գողություն կատարած և ԲԲՀՄ-ի ենթարկված անձանցից մեկը նախկինում ևս երկու անգամ ենթարկվել է ԲԲՀՄ-ի՝ անմեղսունակության վիճակում գողություն կատարելու համար:

Դատապարտված 153 անձից 81-ի նկատմամբ պատիժ է նշանակվել ռեալ ազատազրկում, որը կազմում է դատապարտվածների 52.9%-ը *(2015թ.՝ 134 անձից 92-ի կամ 68.6%-ի նկատմամբ)*: Դատապարտվածների մեջ ազատազրկման դատապարտվածների քանակը 2016 թվականի ընթացքում նախորդ տարվա համեմատ նվազել է 15.7%-ով: Ազատազրկման դատապարտված 16 անձ չի գտնվել նախնական կալանքի տակ:

2016թ. դատարաններում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով քննված և ավարտված 164 անձի վերաբերյալ 118 գործից՝ 7 գործով կամ 5.9%-ով մեղադրվող 9 անձ կամ 5.4%-ն *(2015թ.՝ 1 գործ՝ 1 անձ)* արդարացվել է, որոնցից 3-ն արդարացվել է մասնակի *(2015թ. 1 անձ կամ 0.7%-ը):*

2016թ. դատարանների կողմից արդարացման դատավճիռներ են կայացվել Երևան քաղաքի Շենգավիթ, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ու Գեղարքունիքի մարզի դատախազությունների 1-ական գործով 1-ական անձի նկատմամբ, Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության 1 գործով 3 անձի նկատմամբ, իսկ Կոտայքի մարզի դատախազության 2 գործով 2 անձ և Տավուշի մարզի դատախազության 1 գործով 1 անձ արդարացվել են մասնակի:

2016թ. կայացված արդարացման դատավճիռների դեմ մեղադրողների կողմից բերվել է **6** վերաքննիչ բողոք, որոնցից 3-ը 5 անձի նկատմամբ բավարարվել է, 2 բողոք 2 անձի նկատմամբ մերժվել է, մեկ բողոք մեկ անձի նկատմամբ թողնվել է առանց քննության: Արդարացման դատավճիռների դեմ վճռաբեկ բողոքներ չեն բերվել:

2016թ. 6 գործով 9 անձի *(2015թ.՝ 0)* առաջադրված մեղադրանքները վերաորակվել են: Այդ թվում՝ 1-ական գործով 1-ական անձի նկատմամբ առաջադրված մեղադրանքները վերաորակվել են Արմավիրի ու Գեղարքունիքի մարզերի, Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազությունների գործերով, 2 գործով 3 անձի նկատմամբ՝ Արագածոտնի մարզի դատախազության գործերով, իսկ Կոտայքի մարզի դատախազության 1 գործով 3 անձի նկատմամբ առաջադրված մեղադրանքները վերաորակվել են վերաքննիչ դատարանի կողմից:

Առաջադրված մեղադրանքները դատարանների կողմից վերաորակված 2 գործով 2 անձի վերաբերյալ կայացված դատավճիռների դեմ մեղադրողների կողմից բերվել են վերաքննիչ բողոքներ, որոնք մերժվել են: Դրանցից մեկով բերված վճռաբեկ բողոքը վարույթ չի ընդունվել, սակայն վերաքննիչ դատարանի կողմից կայացված 4 անձի առաջադրված մեղադրանքները վերաորակելու վերաբերյալ դատական ակտի դեմ բերված վճռաբեկ բողոքը ընդունվել է վարույթ և բավարարվել է, քրեական գործն ուղարկվել է ստորադաս դատարան՝ նոր քննության:

2016թ. դատական քննության ընթացքում 2 գործով 2 անձի /2015թ.՝ 1 գործ 1 անձ/ նկատմամբ մեղադրողները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1 հոդվածի կարգով որոշում են կայացրել առաջադրված մեղադրանքը փոփոխելու, լրացնելու և նոր մեղադրանք առաջադրելու մասին:

2015 և 2016թթ. ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով դատարաններում քննված քրեական գործերով վարույթներ չեն կարճվել և մեղադրողների կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքեր չեն արձանագրվել:

2016թ. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով քննված գործերով դատարանների կայացրած դատավճիռների դեմ մեղադրողների կողմից բերվել է ընդհանուրը 29 վերաքննիչ բողոք, որոնցից 7-ը կամ 24.1%-ը բավարարվել է, 21-ը կամ 72.4%-ը մերժվել է, 1-ն ընթացքի մեջ է:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների կողմից բերվել է 10 վճռաբեկ բողոք, որոնցից 5-ը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման դեմ, 4-ը՝ ակնհայտ մեղմ պատիժ նշանակելու դեմ, իսկ 1 բողոք՝ արարքը վերաորակելու դեմ: Բերված բողոքներից 1-ով (պատժի մասով) որոշում է կայացվել վարույթ ընդունելու մասին, որը բավարարվել է, իսկ մնացած բողոքները վարույթ չեն ընդունվել:

Նկատի ունենալով, որ բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողությունների վերաբերյալ քրեական գործերով արարքի իրավաբանական որակման և քննության լրիվության, օբյեկտիվության և բազմակողմանիության ապահովման խնդիրներն արտահայտված են այդ գործերով արդարացման դատավճիռներում և այն մեղադրական դատավճիռներում, որոնցով ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը վերաորակվել է և նկատի ունենալով, որ այդ խնդիրները երբեմն փոխկապակցված են կամ կրկնվող երկու խումբ դատական ակտերի պրակտիկայում, ուստի առավել նպատակահարմար է արդարացման դատավճիռների և վերաորակումների համատեղ ուսումնասիրությունն ու քննարկումը դիտել ըստ դատավարական կամ նյութական իրավունքի նորմերի կիրառման ոլորտների.

Քրեական օրենքի կիրառության խնդիրներ.

Արդարացման դատական ակտերի բացարձակ մեծամասնության հիմքում քրեադատավարական օրենքի կիրառման հարցերն են, իսկ բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողության որակման և այն գողության այլ որակյալ տեսակներից սահմանազատելու խնդիրները դրսևորվել են առավելապես մեղադրական դատական ակտերում, որոնցով ամբաստանյալներին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով առաջադրված մեղադրանքը վերաորակվել է:

Բնակարանային գողությունների որակման գլխավոր խնդիրը **բնակարան** հասկացության մեկնաբանությունն է՝ պայմանավորված դրա օրենսդրական բնորոշման բացակայությամբ: Ի սկզբանե պետք է նշել, որ բնակարանի քրեաիրավական և քրեադատավարական հասկացությունները նույնացվել չեն կարող, հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում այդ հասկացության բնորոշումն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում դրա մեկնաբանությունը բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողության հանցակազմը մեկնաբանելիս հիմք ընդունվել չեն կարող: Քրեական իրավունքում կիրառելի չեն նաև «Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը» սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 2017թ. հունիսի 29-ի որոշմամբ ամրագրված բնորոշումները, որոնք ակնհայտորեն ունեն քաղաքաշինական ուղղվածություն և շինությունների բնակելի նշանակությունը կապում են, օրինակ, կոմունալ հարմարությունների հետ: Բնակարան հասկացության խորհրդային և ՌԴ քրեական իրավունքում տեղ գտած բնորոշումներն իրենց կարևոր գիտագործնական արժեքով հանդերձ, չեն լուծում դրա հետ կապված գործնական խնդիրները:

Բնակարան քրեաիրավական հասկացությունն իր մեջ անվիճելիորեն ներառում է այն շինությունը, որը **նախատեսված է,** կառուցվել կամ վերափոխվել է բնակության համար, ներառվել բնակարանային ֆոնդում: Միաժամանակ, գործնական խնդիրներ են առաջանում այն

դեպքերում, երբ բնակարանային ֆոնդում ներառված (բնակության համար նախատեսված) շինությունները հափշտակության պահին կահավորված չեն բնակության համար անհրաժեշտ կենցաղային իրերով և բնակեցված չեն: Այն մոտեցումը, որ այս դեպքերում շինությունը բնակարան համարվել չի կարող, անընդունելի է: Անձի կողմից մի քանի բնակարաններ ունենալու գրեթե բոլոր դեպքերում այս մոտեցումը քրեաիրավական անհրաժեշտ ու համաչափ պաշտպանություն է ենթադրում դրանցից միայն մեկի համար, նրա, որում անձը փաստացի բնակվում է, իսկ մյուսները բնակարան հասկացությունից բացառվում են միայն այն պատճառով, որ անձը չի կարող միաժամանակ մի քանի բնակարանում բնակվել, կամ, որ անձը որևէ պատճառով, օրինակ՝ վերանորոգման համար, գույքը տեղափոխել է բնակարանից: «Բնակարան» հասկացության մեջ ներառելու համար էականը տվյալ շինության՝ բնակության համար նախատեսված և բնակարանային ֆոնդում ներառված լինելն է ու անհրաժեշտության դեպքում (սեզոնային և այլն) այդտեղ բնակվելու փաստացի հնարավորությունը:

Հազվադեպ չեն այն դեպքերը, երբ բնակության համար նախատեսված շինությունը, այդ թվում՝ բազմաբնակարան շենքում գտնվող բնակարանը, օգտագործվում է բացարձակապես այլ, օրինակ, տնտեսական կամ արտադրական նպատակով՝ որպես պահեստարան, մանկապարտեզ և այլն: Նշված դեպքերում այն բնակարան համարվել չի կարող, քանի որ, անկախ դրա պետական գրանցումից կամ սկզբնական նշանակությունից, այլ նշանակությամբ օգտագործվելով այն փաստացի դադարում է բնակության համար նախատեսված լինելուց: Բնակության համար ի սկզբանե նախատեսված շինությունն այլ նպատակով օգտագործելը փաստացի փոխում է դրա նպատակային նշանակությունը: **Անհրաժեշտ է շեշտել, որ բնակության համար նախատեսված շինությունը բնակարան չհամարելու հատկանիշը ոչ թե այն տվյալ պահին բնակության համար չօգտագործելն է, այլ ուրիշ նպատակով օգտագործելը: Միևնույն ժամանակ, բնակարանն այլ նպատակով օգտագործելը պետք է լինի հստակ, և բնակարանում ոչ կոկիկ կենցաղավարությունը չի կարող հիմք դառնալ շինությունը բնակարան չդիտելու համար:**

Քիչ չեն դեպքերը, երբ անձը մշտապես կամ ժամանակավորապես բնակվում է ի սկզբանե **ոչ թե բնակության, այլ ուրիշ նպատակով նախատեսված շինությունում** կամ այդպիսին չհանդիսացող այլ միավորում (օրինակ՝ շարժական կոնտեյներ)՝ այն հարմարեցնելով բնակության նպատակին: Գտնում ենք, որ այնքանով, որքանով անձը նշված շինությունը հարմարեցրել և օգտագործում է բնակության համար, այսինքն՝ այն փաստացի հավասարեցվել է բնակարանին, հետևաբար դա ևս պետք է ներառել «բնակարան» հասկացության մեջ: Ընդ որում՝ բնակության համար հարմարեցվածությունը չի ենթադրում ստանդարտներով սահմանված բոլոր պահանջներին համապատասխանություն կամ կոմունալ բոլոր անհրաժեշտ պայմաններով ապահովվածություն: Միևնույն ժամանակ, շինությունը կամ այլ միավորը բնակության համար հարմարացնելը, օրինակ՝ դրանում քնելու պայման ստեղծելով, կամ դրան անձի կողմից հարմարվելն ու քնելու համար չնախատեսված տեղում քնելը, դեռևս բավարար չեն այն բնակարան դիտելու համար: Բնակության համար հարմարեցվածությունը ենթադրում է կայուն բնակության համար անհրաժեշտ, թեկուզև ոչ բոլոր պայմանների ձևավորում (օրինակ՝ բեռնակիր կոնտեյները բնակության համար հարմարեցնելը՝ սենյակների բաժանելով, կենցաղային իրերով կահավորելով):

Բայցևայնպես, բնակության համար չնախատեսված շինությունը կամ այլ միավորը բնակության համար հարմարեցնելն ինքնին բավարար չէ այն բնակարան դիտելու համար և

այնքանով, որքանով այն իր իրական տնտեսական կամ այլ նշանակությունն ամբողջապես փոխում է դրանում փաստացի բնակեցմամբ, ուստի բնակության համար չնախատեսված, բայց հարմարեցված շինությունը բնակարան կարող է համարվել փաստացի բնակեցված լինելու դեպքում, քանի որ այդպիսով է դրա այլ նշանակությունը վերածվում բնակելիի և տնտեսական նշանակության միավորում բնակության համար անհրաժեշտ կամ հարմար կահավորանքի առկայությունը դրա նշանակությունն ինքնին չեն փոխում:

Անդրադառնալով այն շինություններից կատարված գողություններին, որոնց մի մասն օգտագործվում է բնակության, իսկ մյուս մասը այլ նշանակությամբ, օրինակ՝ գույքի պահպանության համար, նշենք, որ այդպիսիք դեռևս խորհրդային քրեական իրավունքում դիտվել են բնակարան՝ պայմանով, որ կառուցվածքային առումով անբաժանելի են բնակելի շինությունից, օրինակ՝ անհատական տան առաջին հարկը կազմող ավտոտնակը կամ պահեստարանը: Օժանդակ շինությունների՝ շենքի բնակելի հատվածի հետ կառուցվածքային միասնականությունը, սակայն, դրա կարգավիճակը որոշելիս չի կարող գերագնահատվել: Բնակարանի կառուցվածքային անբաժանելի մասը կազմող օժանդակ շինությունը կարող է համարվել բնակարան բացառապես այն դեպքում, երբ այն իր նպատակային նշանակությամբ ինքնուրույն օգտագործվել չի կարող, ֆունկցիոնալ առումով անբաժանելի է շենքի բնակելի հատվածներից՝ ենթադրելով դրա օգտագործում բացառապես բնակելի հատվածների օգտագործմամբ: Այն դեպքում, երբ բնակելի տան այդպիսի հատվածն օգտագործվում է ինքնուրույն՝ ունի առանձին մուտք և այլն, ապա այն «բնակարան» հասկացության մեջ ներառվել չի կարող:

Ամփոփման շրջանակներում քննարկվել են տրանսպորտային միջոցը բնակարան և պահեստարան դիտելու վերաբերյալ Շիրակի մարզի դատախազի զեկուցագիրը և դրա վերաբերյալ առաջարկությունները:

Ներկայացված հիմնավորումների քննարկմամբ փաստելով, որ տրանսպորտային միջոցը նախատեսված չէ հատկապես գույք պահպանելու համար, չի կարելի անտեսել, որ այն գործնականում շատ հաճախ օգտագործվում է այդ նպատակով: Միևնույն ժամանակ տրանսպորտային միջոցը պահեստարան կարող է հանդիսանալ դրա բաղկացուցիչ մասը չհանդիսացող առարկաների համար, իսկ տրանսպորտային միջոցի դետալների համար այն որպես պահեստարան չի ծառայում:

Ինչ վերաբերում է զեկուցագրում բարձրացված այն հարցին, որ հեռավոր բեռնափոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների ննջարան-խցիկները պետք է դիտվեն որպես բնակարան, քանի որ նախատեսված են և օգտագործվում են քնելու համար, հարկ է նշել, որ տրանսպորտային միջոցների նշված հատվածները չեն համապատասխանում բնակարան հասկացության վերը քննարկված հատկանիշներին առնվազն այն պատճառով, որ բնակարանը ենթադրում է ոչ թե որևէ տեղ քնելու հնարավորություն, այլ առնվազն կայուն բնակության համար անհրաժեշտ հարմարեցվածություն:

Գողությունը համարվում է բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված, եթե մուտք գործելը կատարվել է առանց իրավական հիմքի և այդտեղ բնակվող անձի համաձայնության և գողություն կատարելու դիտավորությամբ: Բնակարան մուտքն ապօրինի չի կարող համարվել, եթե դրանում համատեղ բնակվող մի քանի անձանցից մեկը, մյուսների առարկության պայմաններում թույլատրել է հանցավորի մուտքը: Թեև ապօրինի, բայց այլ դիտավորությամբ

բնակարան մուտք գործելուց հետո առաջացած դիտավորությամբ կատարված գողությունը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով որակվել չի կարող:

Պրակտիկայի ուսումնասիրությամբ պարզվել է, որ բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողությունների դեպքում հանցակցության վերաբերյալ *Գրիգոր Ղլիջյանի* վերաբերյալ գործով արտահայտված իրավական դիրքորոշումները ոչ բոլոր դեպքերում են պատշաճ իրացվել, և օժանդակողի գործողությունները որակվել են որպես համակատարում այն դեպքում, երբ վերջինս ընդամենը հսկել է դրսում:

Հարկ է նկատել սակայն, որ բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողության դեպքում համակատարումը ենթադրում է ոչ թե բոլոր կատարողների պարտադիր անմիջական ներթափանցում բնակարան, այլ բնակարան ապօրինի մուտք գործելով գողության օբյեկտիվ կողմի որևէ գործողության կատարում: Մասնավորապես, այն դեպքում, երբ անձը ինքը չի ներթափանցում բնակարան, սակայն կատարում է հափշտակությանն ուղղված գործողություններ, մասնավորապես, դրսից օգնում է բնակարանից դուրս հանել հափշտակության առարկան, ապա առկա է համակատարում:

2016թ. կայացված վերաորակման դատական ակտի բողոքարկման արդյունքում *Վարդան Մկրտչյանի և մյուսների* վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ որոշակիորեն հստակեցվել է հափշտակությունների որակման գործնական լրջագույն խնդիրներից մեկը՝ սահմանվել են շարունակվող հանցագործությունը հանցագործությունների համակցությունից սահմանազատելու որոշակի չափանիշներ:

Ի լրումն վերոգրյալի՝ *Հակոբ Մարտիրոսյանի* և այլոց վերաբերյալ գործով որոշմամբ հիմնավոր համարելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի բողոքը, ՀՀ Վճռաբեկ դատարանը սահմանել է, որ յուրաքանչյուր դեպքում ապացուցման ենթակա է ոչ թե միասնական դիտավորության բացակայությունը, այլ առկայությունը. այլ կերպ ասած՝ արարքը յուրաքանչյուր դեպքում պետք է համարել ոչ միասնական դիտավորությամբ կատարված, եթե միասնական դիտավորությամբ կատարված լինելը չի հաստատվել :

Ամփոփմամբ պարզվել է, որ ինչպես բնակարան, այնպես էլ պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելով գողությունների մեծամասնությունը կատարվում է արգելքները վնասելու կամ ոչնչացնելու (փական վնասելու, պատը ջարդելու, դուռը, ապակին կոտրելու և այլն) ձևով հաղթահարելու միջոցով: Արդյունքում անձը վնաս է կրում ոչ միայն գույքի հափշտակության, այլև գույքը պահպանելու համար նախատեսված, կամ բնակարանում գտնվող այլ գույքի վնասման կամ ոչնչացման արդյունքում; Պրակտիկան վկայում է, սակայն, որ վերը նշված բազմաթիվ դեպքերում հանցավորի արարքը երբեք չի որակվել գողության և դիտավորությամբ գույքը վնասելու կամ ոչնչացնելու հանցագործությունների համակցությամբ: Այդ մոտեցման հիմքում դրված այն փաստարկը, որ տվյալ դեպքում անձի դիտավորությունն ուղղված է ոչ թե գույքը վնասելուն կամ ոչնչացնելուն, այլ դրա արդյունքում մատչելի դարձող գույքի հափշտակությանը, անընդունելի է:

Անհրաժեշտ չհամարելով հանցագործությունների համակցության, ինչպես նաև մեղքի դիտավորյալ ձևի և դրա տեսակների մանրամասն քննարկումը՝ փաստենք, որ գույք հափշտակելու համար գույք վնասելիս կամ ոչնչացնելիս անձը բոլոր դեպքերում գործում է ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ և այն հավասարապես ընդգրկում է նաև նշված գույքը վնասելը կամ ոչնչացնելը: Անձը գիտակցում է, որ բնակարան ապօրինի մուտք գործելու համար վնասում է գույքը, նախատեսում է դրա արդյունքում տուժողին վնաս պատճառելը և

ցանկանում է դա կամ առնվազն գիտակցաբար թույլ է տալիս: Իսկ վերը նշված փաստարկում խոսքն, ըստ էության, հանցավոր ոտնձգության նպատակի մասին է, որը ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը չի բացառում: Ավելին, գործնականում կիրառվող մոտեցումը չի ապահովում մարդու իրավունքների քրեաիրավական լիարժեք պաշտպանությունը և, օրինակ, 10.000 ՀՀ դրամ արժեքով գույքը հափշտակելու համար 1.000.000 ՀՀ դրամ արժեքով պատը քանդելու դեպքում քրեական օրենքի պաշտպանության տակ է առնվում բացառապես հափշտակված գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, իսկ կրած ավելի մեծ գույքային վնասը քրեաիրավական պաշտպանությունից դուրս է մնում:

Քրեադատավարական օրենքի կիրառության խնդիրներ.

Արդարացման դատական ակտերի վերլուծությունից ակնհայտ է, որ դրանց բոլորի հիմքում քննարկվող հանցակազմի որևէ հատկանիշը հաստատող ապացույցների՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին անհամապատասխանությունն է, իսկ դրանց բացարձակ մեծամասնության դեպքում՝ հանցագործության կատարմանը ամբաստանյալի մասնակցությունն ապացուցված չլինելը: Նշված դատական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ բոլոր այն քրեական գործերով, որոնցով կայացվել են արդարացման դատավճիռներ կամ արարքները վերաորակվել են, մեղադրանքներն ակնհայտ անհիմն չեն եղել: Նշված գործերից և ոչ մեկով անձինք անհիմն մեղադրանքով դատի չեն տրվել: Այդ մասին է վկայում այդ գործերով արդարացման դատավճիռներից մի քանիսի բեկանումը վերադաս դատարանների կողմից և փաստում, որ դրանցով ամբաստանյալների մեղավորությունն ապացուցված չլինելու վերաբերյալ հետևությունները պայմանավորված են նաև ապացույցների գնահատման գործընթացում օբյեկտիվորեն առկա սուբյեկտիվ բաղադրիչով, որն էական նշանակություն ունի այդ ապացույցների հիման վրա ներքին համոզմունքի ձևավորման համար:

Երկու քրեական գործով հանցագործությանն ամբաստանյալի մասնակցությունն ապացուցված չի համարվել վերջիններիս՝ դեպքի վայրում բռնվելու պայմաններում: Դատարանները գտել են, որ ամբաստանյալների պնդումներն այն մասին, որ դեպքի վայրում գտնվելով չեն գիտակցել հանցակցի կողմից գողություն կատարելու հանգամանքը և չեն մասնակցել դրան, հերքված չեն:

Կոլեգիան փաստում է, որ բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողությունների վերաբերյալ գործերով արդարացման և վերաորակման դատական ակտերի վերլուծությունը վեր է հանել կոնկրետ գործերով քննության բացեր և թերություններ, որոնք չեն նկատվել կամ չեն լրացվել այլ դատավարական միջոցներով և դրվել են արդարացման դատավճիռների հիմքում:

Այսպես,

Մեկ գործով, որով կայացվել է մասնակի արդարացման դատավճիռ, անձը բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողության համար մեղադրվել է այն դեպքում, երբ տուժողը պահեստարանից կատարված գողության մասին հաղորդում տալուց որոշակի ժամանակահատված հետո է հայտնել նաև բնակարանից կատարված գողության մասին: Գործով փաստական տվյալներ են ձեռք բերվել տուժողի կողմից ամբաստանյալին, որը հանդիսացել է իրենց նախկին աշխատողը, բնակարանից կատարված զարդերի գողությունը խոստովանելու համար ծեծի ենթարկելու մասին: Այդ կապակցությամբ կատարված քննությամբ դեպքը չի հաստատվել:

Ամբաստանյալը նախաքննության ընթացքում լրացուցիչ ցուցմունքով և դատաքննական ցուցմունքով հերքել է բնակարանից գողություն կատարելու հանգամանքը, իսկ նախաքննության ընթացքում խոստովանելով նաև բնակարանից կատարված գողությունը, հստակ տեղեկություններ հափշտակվածի վերաբերյալ չի ներկայացրել՝ պնդելով, թե դրանք նետել է: Քննչական փորձարարության ժամանակ ամբաստանյալը մտել է տուժողի տան ննջասենյակներից մեկը և ցույց տվել պահարանը, որի վրայից գողացել է զարդերը: Մինչդեռ, ըստ տուժողի ցուցմունքների՝ գողությունը կատարվել է բնակարանի այլ սենյակից: Նախաքննության ընթացքում այս հակասությունը չի պարզվել:

Մեկ այլ՝ բնակարան ապօրինի մուտք գործելով զգալի չափ կազմող արժեքով մալուխ հափշտակելու վերաբերյալ գործով արդարացման դատավճռում դատարանն արձանագրել է, որ ամբաստանյալը հերքել է տուժողի կողմից նշված չափի և որակի մալուխ հափշտակելու հանգամանքը: Ցուցմունքների արժանահավատությունը գնահատելիս դատարանը մատնանշել է քննության որակն անմիջականորեն շոշափող փաստարկ այն մասին, որ հափշտակության առարկան անհատականացնող, այդ թվում՝ դրա երկարության վերաբերյալ տվյալներ, որոնք դրվել են դատաապրանքագիտական փորձաքննության եզրակացության հիմքում, տուժողը հայտնել է հաղորդում տալուց միայն 6 ամիս անց: Դատարանը գտել է նաև, որ տուժողի ցուցմունքը չի կարող դրվել դատական ակտի հիմքում նաև այն պատճառով, որ վերջինս հարցաքննվել է միայն նախաքննության ընթացքում և դատավարության որևէ փուլում չի ապահովվել ամբաստանյալ Հակոբ Հակոբյանի հակընդդեմ հարցման իրավունքը, այսինքն՝ նա հնարավորություն չի ունեցել հարցեր ուղղելու տուժողին:

Մեկ այլ գործով, որով բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողության վերաբերյալ մեղադրանքը վերաորակվել է, դատավճռի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրելու, որ պատշաճ քննությամբ անհրաժեշտ ապացուցողական չափանիշով չի պարզվել, թե ամբաստանյալն ուներ տվյալ բնակարան մուտք գործելու իրավունք, թե ոչ: Վերջինս իրեն մեղավոր չի ճանաչել, պատճառաբանելով, որ ինքը տուժողի թույլտվությամբ ժամանակ առ ժամանակ բնակվել է ամառանոցում և ազատ մուտք ու ելքի իրավունք է ունեցել: Տուժողը դատական քննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ ամբաստանյալն իր թույլտվությամբ ամառանոց ազատ մուտք գործելու իրավունք է ունեցել և, ինչպես իր գիտությամբ, այնպես էլ առանց իրեն տեղյակ պահելու, ժամանակ առ ժամանակ բնակվել է ամառանոցում:

Նշված գործով մեղադրանքի հիմքում դրվել է ամբաստանյալի և տուժողի միջև կատարված առերեսման արձանագրությունը, համաձայն որի տուժողը դեռևս նախաքննության ընթացքում ընդունել է, որ ամբաստանյալի հետ գտնվել է մտերիմ հարաբերությունների մեջ, նա մինչև գողությունը իր իմացությամբ ապրել է նշված տանը, բայց դա նրան իրավունք չի տվել առանց իրեն տեղյակ պահելու մուտք գործել ամառանոց և գողանալ ավտոմեքենայի գլանանոթը: Այս ձևակերպումը, սակայն, ամբաստանյալի և տուժողի հարաբերությունների, նշված բնակարանում իրականում նախկինում բնակված լինելու պայմաններում, բավարար չի դիտվել հաստատված համարելու, որ ամբաստանյալի մուտքը բնակարան եղել է ապօրինի, քանի որ դրանից հստակ չէ, որ ամբաստանյալի իրավունք չունենալը վերաբերում է հատկապես բնակարան մուտք գործելուն և ոչ թե գլանանոթը վերցնելուն:

Բնակարանային գողությունների վերաբերյալ գործերով քրեական արդարադատության պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ գործերով քննության լրիվության խնդիրն

արտահայտվում է ընդհուպ նրանում, որ անհրաժեշտ հստակությամբ չի պարզվում նաև դեպքի վայրի՝ բնակարան հանդիսանալու կամ չհանդիսանալու հանգամանքը: Շատ դեպքերում վարույթն իրականացնող մարմինը բավարարվում է գողության դեպքի վայր հանդիսացող շինության կամ այլ միավորի կադաստրային փաստաթղթերը քրեական գործին կցելով և միջոցներ չի ձեռնարկում դրա փաստացի օգտագործման նպատակը պարզելու ուղղությամբ նաև այն դեպքում, երբ գործով ձեռք բերված այլ ապացույցներով գրեթե հաստատվում է, որ այն օգտագործվում է ոչ բնակելի նշանակությամբ: Դատական քննության փուլում գտնվող մի քանի գործերով արարքի իրավաբանական որակման հարցը քննարկելիս պարզվել է, որ բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողության դեպքի վայրը լուսանկարահանված չէ կամ կատարված լուսանկարները, որևէ կապ չունենալով կրիմինալիստիկական լուսանկարահանման կանոնների հետ, թույլ չեն տալիս հասկանալ, թե արտաքինից կամ ներքինից ինչ տեսք ունի շինությունը՝ որոշելու համար ինչ նպատակով է այն փաստացի օգտագործվում և հանդիսանում է բնակարան, թե՝ ոչ: Աշխատանքային կարգով կատարված դրանց ուսումնասիրությամբ հետագայում պարզվել է, որ բնակարան դիտված առանձին կառույցներ ակնհայտորեն օգտագործվում են այլ նպատակներով, օրինակ՝ գույք պահպանելու համար և բնակեցված չեն:

Անդրադառնալով քննարկվող հանցագործությունների գործերով պատժի նշանակման հարցերին՝ կոլեգիան փաստում է, որ 2016թ. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով ազատազրկման դատապարտված 1 անձ պատժից ազատվել է համաներման ակտի հիման վրա *(2015թ.՝ 0)*:

Քննարկվող ժամանակահատվածում դատարանները ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ պատիժ են նշանակել 2 գործով 4 անձի նկատմամբ *(2015թ. ընթացքում 3 գործով 4 անձի նկատմամբ)*:

2016թ. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով քննված 55 կամ 48.2% գործով 72 կամ 47% անձանց նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, որոնցից 1 գործով 1 անձի նկատմամբ վերաքննիչ դատարանի կողմից *(2015թ.՝ 36 կամ 29.5% գործով 42 կամ 31.3% անձի նկատմամբ)*:

Նշված 72 անձից 29-ի կամ 40%-ի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել մեղադրողների միջնորդության հիման վրա *(2015թ.՝ դատապարտված 42 անձից 15-ի կամ 35.7%-ի նկատմամբ)*:

Այսինքն՝ 2015թ. համեմատությամբ 2016թ. մեղադրողների կողմից պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ միջնորդությունների թիվն աճել է 14-ով:

2016թ. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով քննված գործերով դատարանների նախաձեռնությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման դեմ մեղադրողների կողմից բերվել է 21 վերաքննիչ բողոք, որոնցից 5-ը կամ 23.8%-ը բավարարվել է, իսկ 16-ը կամ 76.1%-ը մերժվել *(2015թ. բերվել է 7 բողոք, որոնք բոլորն էլ մերժվել են)*:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից պատիժը պայմանականորեն չկիրառելու դեմ բերվել է 5 վճռաբեկ բողոք, որոնցով վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել վարույթ ընդունելը մերժելու մասին:

Մեջբերված վիճակագրությունը վկայում է, որ բնակարանային գողությունների համար պատժողական քաղաքականության մեջ ևս արտահայտված են պատժողական

քաղաքականության մեղմացման ընդհանուր միտումները, պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքերի աճը՝ մասնավորապես:

Քննարկվող հանցագործության համար մեղադրվող անձանց նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարաններն ինքնուրույն նշանակություն են տվել կատարված հանցագործության բնույթին և վտանգավորության աստիճանին, որոնք արտահայտվում են հանցագործությունը բնութագրող այնպիսի հանգամանքներում, ինչպիսիք են՝ բնակարան մուտք գործելու եղանակը(մուտքը բաց դռնից, հատուկ կամ հարմարեցված գործիքներ օգտագործելը, գույք վնասելը կամ ոչնչացնելը), հանցակցությունը, դրա ձևը, ամբաստանյալներից յուրաքանչյուրի դերը, հափշտակության առարկան, դրա արժեքը, նշանակությունը տուժողի համար, հափշտակված գույքն օգտագործելու նպատակը (օրինակ՝ սնունդ), ամբաստանյալի հետհանցավոր վարքագիծը, մեղքն ընդունելը, հանցագործության մանրամասները հայտնելը, հափշտակված գույքը որոնելուն աջակցելը, վնասը փոխհատուցելը և այլն: Էական նշանակություն է տրվել նաև հանցավորին բնութագրող հանգամանքներին, առողջական վիճակին և տարիքին հատկապես: Անչափահասների կողմից կատարված բնակարանային գողությունների համար պատժողական պրակտիկան ակնհայտ առանձնանում է: Պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներից ըստ նշանակության վճռորոշ դեր են ունեցել ամբաստանյալի խնամքին մինչև տասնչորս տարեկան երեխաների առկայությունը:

Անհրաժեշտ համարելով հատուկ անդրադառնալ բնակարանային գողությունների կրկնակիության դեպքերի դրսևորման առանձնահատկություններին՝ կրկնենք, որ բնակարանային գողության համար մեղադրված անձանցից 17-ը նախկինում դատապարտվել է գողություն կատարելու համար, որոնցից 11-ը բնակարանային գողության համար: Մնացած 6-ը դատապարտված է եղել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված, այսինքն՝ պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելով կատարված գողությունների համար: Այլ կերպ ասած՝ բնակարանային գողությունների համար մեղադրված բոլոր անձանց նախկին դատվածությունները կապված են եղել արգելքներ հաղթահարելու, այսպես ասած, ապօրինի մուտք գործելու հետ:

Ուշագրավ է նաև, որ բնակարանային գողությունների կրկնակիության դեպքերին բնորոշ է հանցակցությամբ կատարումը և հանցագործությունների բազմակիությունը, այսինքն՝ մի շարք դեպքերում, ինչպես հաշվետու, այնպես էլ նախորդ ժամանակահատվածում, անձինք մեղադրվել են մի քանի դրվագ բնակարանային գողությունների համար: Մի քանի դեպքերում անձինք ունեցել են մի քանի դատվածություն: Այլ կերպ ասած՝ հանգամանքների որոշակի զուգորդմամբ գողություն կատարած անձինք, որպես կանոն, կրկնակիության վերաբերյալ վիճակագրությամբ չեն անցնում և կրկին անգամ կատարված բնակարանային գողություններն առանձնանում են կազմակերպված և արհեստավարժ կատարմամբ:

Այսպես, խմբի կազմում բնակարան, այնուհետև պահեստարան ապօրինի մուտք գործելով կատարված գողությունների համար 2014թ. դատապարտված և համաներման ակտի կիրառմամբ պատժից ազատված Մարգար Կայիլյանը 2015թ. դատապարտվել է նաև 2 դրվագ բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողությունների համար, իսկ 2016թ՝ դատապարտվել է դարձյալ խմբի կազմում բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողության համար՝ ի վերջո դատապարտվելով 7 տարի ժամկետով ազատազրկման:

Հատկանշական է, որ վերջին դեպքով Մարգար Կայիլյանի հանցակիցներ Աբրահամ Բրոյանը և Հարություն Տրապիզոնյանը ևս հետագայում մեղադրվել են կարելի է ասել համասեռ հանցագործության՝ առանց հափշտակելու նպատակի ավտոմեքենային տիրանալու համար:

Կամ, ՌԴ քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասով ՈՒՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողության համար դատապարտված Արմեն Մարտիրոսյանը մեղադրվել և դատապարտվել է 11 դրվագ բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված և 1 դրվագ՝ առանձնապես խոշոր չափերի գողություն կատարելու համար՝ դատապարտվելով 8 տարի ժամկետով ազատազրկման:

Կամ, խմբի կազմում 4 դրվագ բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողության, 1 դրվագ բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված կողոպուտի և երկու դրվագ խոշոր չափերի խարդախությունների մեջ մեղադրված և 7 տարի ժամկետով ազատազրկման դատապարտված Արմեն Մանուկյանը նախկինում մեղադրվել է խմբի կազմում 11 դրվագ բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողության համար և դատապարտվել 7 տարի ժամկետով ազատազրկման:

Բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողությունների և համասեռ այլ հանցագործությունների համար 7 անգամ դատվածություն ունեցող Արտաշես Ավետիքյանը 2 դրվագ բնակարանային գողության համար դատապարտվել է 6 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկման:

Դատական պրակտիկայի վերլուծությունը վեր է հանում նաև բնակարանային գողություն կատարած անձանց նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու չարդարացված դեպքեր, երբ գործի հանգամանքները հիմք են տվել չհամաձայնելու դատական ակտի հետ: Օրինակ, Հասմիկ Սարգսյանը Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2015թ դեկտեմբերի 1-ի դատավճռով դատապարտվել է բնակարանային գողության համար և նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել: Դեռևս դատավճիռն օրինական ուժի մեջ չմտած՝ Հասմիկ Սարգսյանը 2015թ. դեկտեմբերի 22-ին կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ հոդվածով նախատեսված նոր հանցագործություն, որի համար դատապարտվել է 4 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկման և դարձյալ պատիժը պայմանականորեն չի կիրառվել: Վերջինս 2017թ. կրկին դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով և այդ դատավճռով միայն նախկին պատիժները պայմանականորեն չկիրառելը վերացվել է, Հասմիկ Սարգսյանը դատապարտվել է 6 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկման:

Ելնելով վերոգրյալից.

Կոլեգիան որոշում է՝

1. Մարզերի, Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազներին՝

1) Մինչև յուրաքանչյուր տարվա կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը ուսումնասիրել մարզի և վարչական շրջանի դատախազության տարածքում (Երևան քաղաքի դատախազին՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության վարույթում գտնվող գործերով) բնակարանային գողությունների կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները,

ուսումնասիրության հատուկ առարկա դարձնել դրանց կատարման ժամը, այն, թե տվյալ տարածքի հատկապես որ թաղամասում են առավել շատ բնակարանային գողության դեպքեր արձանագրվում, արդյոք գողություն կատարող անձինք ունեն դատվածություն նախկինում նույնաբնույթ կամ համասեռ հանցանք կատարելու համար:

Ուսումնասիրության արդյունքներով համապատասխան միջնորդագրեր հասցեագրել ոստիկանության տարածքային վարչության պետին, անհրաժեշտության դեպքում՝ այլ իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին՝ վերջիններիս կողմից միջնորդագրի կապակցությամբ գործուն քայլեր ձեռնարկելու հարցում ցուցաբերելով խիստ հետևողականություն:

2) Բացառել միայն ինքնախոստովանական ցուցմունքի հիման վրա անձի կողմից գողություն կատարելը հիմնավորված համարելու յուրաքանչյուր դեպք, անձի կողմից բնակարանային գողություն կատարելու մասին ինքնախոստովանական ցուցմունք տալու դեպքում, հենց նույն օրը ապահովել, որպեսզի կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությամբ կատարվող դեպքի վայրի զննությունը կամ քննչական փորձարարությունը կատարվի ամենայն մանրամասնությամբ, այն հաշվառմամբ, որ քննչական այդ գործողությունների արդյունքները նոր ապացույցներ ձեռք բերելու հնարավորություն ընձեռեն:

3) Ապահովել, որպեսզի բնակարանային գողությունների դեպքերով դեպքի վայրի զննության արձանագրություններն անհապաղ ուղարկվեն դատավարական ղեկավարում իրականացնող դատախազներին, իսկ վերջիններս անմիջապես ուսումնասիրեն դրանք և, եթե պարզեն, որ զննությունը թերի կամ մակերեսային է կատարվել հանձնարարեն կատարել դեպքի վայրի լրացուցիչ զննություն:

4) Հանցագործությունների և պատահարների մասին ստուգման կարիք ունեցող տեղեկությունների, ահազանգերի գրանցման թիվ 2 մատյանների ուսումնասիրությամբ վերհանել այն դեպքերը, երբ գողության մասին ահազանգողը կամ այլ անձ հետո հայտնում է գույքի՝ ոչ թե գողացված, այլ կորցրած-գտած լինելու մասին: Անհրաժեշտության դեպքում իրականացնել կոնկրետ անձի ընդունելություն՝ ըստ անհրաժեշտության կոնկրետ դեպքով ձեռնարկելով դատախազական ներգործության համապատասխան միջոցներ:

5) Տրանսպորտային միջոց ապօրինի ներթափանցելով կատարված, դրանց բաղկացուցիչ մասը չհանդիսացող և դրանում պահպանվող գույքի հափշտակությունը դիտել որպես պահեստարան ապօրինի մուտք գործելով կատարված:

2. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին՝

ՀՀ քրեական օրենսգրքի 175-177-րդ հոդվածներով նախատեսված արարքների որակման առումով ձևավորել հետևյալ պրակտիկան.

1/ «Բնակարան» հասկացությունն իր մեջ ներառում է.

ա/ մշտական կամ ժամանակավոր բնակության համար նախատեսված շինությունը, անկախ փաստացի բնակեցված լինելուց, բացառությամբ այն դեպքերի, երբ այն ակնհայտորեն օգտագործվում է այլ նշանակությամբ,

բ/ մշտական կամ ժամանակավոր բնակության համար չնախատեսված, բայց դրանց համար ակնհայտորեն հարմարեցված և փաստացի բնակեցված շինությունները կամ այլ միավորները (մետաղական տնակներ և այլն),

գ/ բնակարանից կառուցվածքային (միակառույց) առումով անբաժանելի ոչ բնակելի շինությունները, եթե դրանցից մուտք կա բնակելի շինություն:

2/ Շինությունը կամ այլ միավորը համարվում է բնակության համար ակնհայտորեն հարմարեցված, եթե այն իր հատկանիշներով անկողմնակալ դիտորդին ողջամտորեն հիմք է տալիս գիտակցելու, որ փաստացի նշանակությամբ դարձվել է բնակելի: Բնակության համար հարմարեցվածությունը չի ենթադրում պետական բնակարանաշինական չափանիշներին(կոմունալ հարմարություններ և այլն) տվյալ միավորի լրիվ համապատասխանություն: Միաժամանակ, որևէ շինությունում կամ այլ միավորում գիշերելու կամ բնակությանը բնորոշ որևէ այլ գործողություն կատարելու եզակի հարմարությունը բավարար չէ այն բնակության համար հարմարեցված դիտելու համար:

3/ Պահեստարան է այն կառույցը, շենքը, տարածքը և այլ միավորը, որը մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվում է գույք պահելու, պահպանելու, այն այլ անձանց մատչելի չդարձնելու, դրանք վնասելուց, ոչնչացնելուց, հափշտակվելուց, կորստից զերծ պահելու կամ կենդանիների փախուստը կանխելու համար (նկուղը, ավտոտնակը այդ թվում՝ բնակարանին միակառույց, եթե դրանցից մուտք չկա բնակելի շինություն, կենդանիներ պահելու համար ցանկապատած տարածքները և այլն: **Պահեստարան հասկացությունն իր մեջ ներառում է նաև տրանսպորտային միջոցը՝ դրանում պահպանվող և տրանսպորտային միջոցի բաղկացուցիչ մասը չհանդիսացող առարկաների համար:**

4/ Բնակարան, պահեստարան կամ շինություն մուտք գործելը հանցավորի ֆիզիկական ներթափանցումն է դրանց ներս, կամ առանց փաստացի ֆիզիկական ներթափանցման դրա ներսում գտնվող առարկաները որևէ կերպ մատչելի դարձնելը:

5/ Բնակարան, պահեստարան կամ շինություն մուտք գործելն ապօրինի է, եթե այն կատարվել է առանց իրավական հիմքի և (կամ) այնտեղ բնակվող անձանց (անձի) կամքին հակառակ՝ գույք հափշտակելու դիտավորությամբ,

6/ Բնակարան, պահեստարան կամ շինություն մուտք գործելով կատարված հափշտակությունների վերաբերյալ քրեական գործերով ապահովել, որպեսզի ապացույցների բավարար համակցությամբ պարզվի.

ա/ դեպքի վայրի՝ բնակարան, պահեստարան կամ շինություն օբյեկտիվորեն հանդիսանալու հանգամանքը ըստ վերը սահմանված չափանիշների՝ հստակեցնելով դրա՝ մշտական կամ ժամանակավոր բնակության համար նախատեսված, հարմարեցված լինելը, բնակության կամ այլ նպատակով փաստացի օգտագործվելը՝ ապահովելով, ի թիվս այլնի, դեպքի վայրի պատշաճ և մանրամասն լուսանկարահանումը,

բ/ հանցավորի ընկալումը դեպքի վայրի՝ բնակարան, պահեստարան կամ շինություն հանդիսանալու վերաբերյալ: Այս հանգամանքը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել շինության կամ այլ միավորի բնույթը (առանձին շենք կամ բազմաբնակարան շենքի բնակարան), արտաքին տեսքը (այդ թվում՝ ցուցանակների առկայությունը), տեղակայումը, հանցավորի առնչությունը դրան, այդ թվում՝ նախկինում այդտեղ գտնվելը, հարաբերություններն դրան տիրապետող անձանց հետ և այլն,

գ/ բնակարան, պահեստարան կամ շինություն մուտք գործելու ապօրինի բնույթը՝ հստակեցնելով՝ ունեցել է անձը դեպքի կամ դրան նախորդող ժամանակահատվածում նշված միավորներ մուտք գործելու իրավունք, թե ոչ, եթե այո, ապա ինչ հիմքով, եղել է, արդյոք դրանց տիրապետող անձանց հստակ և հանցավորի համար ակնհայտ կամահայտնությունը առանց իր թույլտվության նշված տարածքներ մուտք չգործելու վերաբերյալ, նկատի ունենալով, որ դրանց փականների բացակայությունը, անսարքությունը կամ դուռը բաց լինելը, հանցավորի կողմից նախկինում այդտեղ մուտք գործած լինելն, ինքնին, չեն բացառում մուտք գործելու ապօրինի բնույթը:

7/ Մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդման վերջնական ծավալները որոշելիս նկատի ունենալ.

ա/ այն դեպքում, երբ անձը գույքի գաղտնի հափշտակության դիտավորությամբ մուտք է գործում շինություն, կարծելով, թե այն բնակարան է (բնակարանից գողություն կատարելու կոնկրետացված դիտավորություն), սակայն այն իրականում բնակարան չի հանդիսանում, օրինակ, շահագործվում է այլ՝ առևտրային նպատակով, վերջինիս արարքը պետք է որակել որպես բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողության փորձ,

բ/այն դեպքում, երբ անձը կարծել է, թե մուտք է գործում պահեստարան կամ այլ շինություն, սակայն այն հանդիսանում է բնակարան (օրինակ՝ հարմարեցված է բնակության համար և բնակեցված), ապա վերջինիս արարքը պետք է որակել որպես պահեստարան կամ շինություն մուտք գործելով կատարված գողություն,

գ/ այն դեպքում, երբ անձը չի տարբերակել այն շինության բնույթը, որտեղ մուտք է գործում, այսինքն՝ գործել է չկոնկրետացված դիտավորությամբ, գույքի գաղտնի հափշտակության դիտավորությունը հավասարապես ընդգրկել է այն բնակարանից կամ պահեստարանից կամ շինությունից կատարելու հանգամանքը, ապա արարքը պետք է որակել ըստ փաստացի հետևանքի,

դ/այն դեպքում, երբ անձը բնակարան, պահեստարան կամ շինություն մուտք գործելով գողություն (ավազակություն, կողոպուտ) կատարելիս, այդ թվում՝ մուտք գործելու համար, դիտավորությամբ ոչնչացրել կամ վնասել է տուժողի զգալի չափերի գույքը, որը չի հանդիսացել հափշտակության առարկա (պատ, դուռ, փական, կահույք և այլն), ապա վերջինիս արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ՝ որպես բնակարան (պահեստարան կամ շինություն) ապօրինի մուտք գործելով կատարված գողություն (ավազակություն, կողոպուտ) և գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը

ե) այն դեպքում, երբ բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողությանը մասնակցել են մեկից ավելի անձինք և հանցակիցներից մեկը, թեև փաստացի մուտք չի գործել բնակարան, սակայն նրա գործողությունները չեն սահմանափակվել միայն օժանդակությամբ՝ խորհուրդներով, ցուցումներով, տեղեկատվություն կամ միջոցներ, գործիքներ տրամադրելով կամ խոչընդոտները վերացնելով (օրինակ՝ դրսում հսկելով, որպեսզի կատարողն առանց խոչընդոտի կատարի հափշտակությունը, ավտոմեքենայի մեջ սպասելով կատարողի կողմից գողացված իրերը հետագայում նրա հետ միասին ապահով վայր տեղափոխելու նպատակով և այլն), այլ կատարել է հափշտակության բաղկացուցիչ մասը կազմող գործողություններ, օրինակ, գործողություններ, որոնք անմիջականորեն կապված են բնակարանից գույքը վերցնելու հետ, հանցավորի արարքը պետք է որակել որպես համակատարում,

զ) բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողության փորձն իր մեջ չի կարող ներառել նույն հանցագործության ավարտված տեսակը: Բնակարան ապօրինի մուտք գործելով խոշոր կամ առանձնապես խոշոր չափերի գողություն կատարելու դիտավորություն ունեցող անձի կողմից բնակարան ապօրինի մուտք գործելով զգալի չափի գողություն կատարելու դեպքում, վերջինիս արարքը ենթակա է որակման որպես բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված ավարտված գողություն՝ մեղադրանքում նկարագրելով, որ հանցավորի դիտավորությունն ընդգրկել է ավելի խոշոր չափի գույքի հափշտակությունը:

8) Բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողությունների վերաբերյալ գործերով մեղադրական ճառով ամբաստանյալի նկատմամբ նշանակվող պատժի չափի և այն փաստացի կրելու հարցերի վերաբերյալ միջնորդություն ներկայացնելիս՝

ա) մեղադրական ճառում մանրամասն վերլուծել կատարված հանցագործության բնույթի և հանրային վտանգավորության աստիճանի վերաբերյալ փաստական տվյալները՝ ներկայացնելով արարքի ինչպես տեսակային, այնպես էլ կոնկրետ դեպքում դրա հանրային վտանգավորության վրա ազդող հանգամանքները,

բ) պատժի անհատականացման սկզբունքի անշեղ գործողությունն ապահովելու նպատակով նախորդ ենթակետում նշված հարցերի վերաբերյալ միջնորդություններ ներկայացնելիս համակցության մեջ հաշվի առնել՝

հանցագործությունների բազմակիությունը, հատկապես՝ հանցավորի կողմից նախկինում համասեռ հանցագործություններ կատարած լինելու հանգամանքը,

հանցագործությամբ պատճառված վնասը հատուցելը կամ այլ կերպ հարթելը, տուժողի դիրքորոշումը,

հանցակցությունը, դրա ձևը և տեսակը, հանցավորի դերը հանցակցության մեջ

հանցագործության կատարման եղանակը (բնակարան մուտք գործելու եղանակը. հատուկ կամ հարմարեցված գործիքներ գործադրելը, մուտք գործելիս գույք վնասելը և այլն),

հափշտակված գույքը, դրա չափը և արժեքը, նշանակությունը տուժողի համար,

հանցագործության նպատակը, անմիջական կապը հանցավորի սոցիալական դրության հետ,

հանցավորի տարիքը, առողջական վիճակը, ընտանիքը, սոցիալական վիճակը, զբաղմունքը,

մեղքն ընդունելը, հանցագործության բացահայտմանը, հափշտակված գույքը որոնելուն օժանդակելը,

գ) որպես կանոն բացառել պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելը՝ հանցագործությամբ պատճառված վնասը հատուցված կամ այլ կերպ հարթված չլինելու դեպքում և բողոքարկել այն դատական ակտերը, որոնցով այդ դեպքերում պատիժը պայմանականորեն չի կիրառվել:

4. ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Ա.Հարությունյանին՝

1) 3-օրյա ժամկետում նախապատրաստել և ՀՀ գլխավոր դատախազի ստորագրմանը ներկայացնել ՀՀ ոստիկանության պետին ուղղված գրության նախագիծ՝ նախորդ տարի բացահայտման խիստ ցածր ցուցանիշ արձանագրած՝ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջաններում բնակարանային գողությունների բացահայտման ցուցանիշները բարելավելու ուղղությամբ գործուն միջոցներ ձեռնարկելու առաջարկությամբ:

2) Ամփոփման արդյունքներով 5-օրյա ժամկետում նախապատրաստել և ՀՀ գլխավոր դատախազի ստորագրմանը ներկայացնել ՀՀ ոստիկանության պետին ուղղված միջնորդագրի նախագիծ՝ հանձնարարելու ենթակա ստորաբաժանումներին բնակարանային գողությունների վերաբերյալ գործերով ուժեղացնել ոստիկանության ծառայությունների աշխատանքների ինտենսիվությունը, այդ թվում՝ պարեկապահակային ծառայության մշտական ուշադրության կենտրոնում պահել բնակարանային գողության կատարման համար առավել կրիմինոգեն վայրերը, մասնավորապես՝ հանրապետության ամառանոցային տարածքները, հատուկ կարևորել բնակարանային գողության կամ համասեռ հանցագործության կատարման համար նախկինում դատված անձանց մշտապես օպերատիվ տեսադաշտում պահելու հանգամանքը:

3) Ամփոփման արդյունքներով 7-օրյա ժամկետում նախապատրաստել և ՀՀ գլխավոր դատախազի ստորագրմանը ներկայացնել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին ուղղված գրության նախագիծ՝ ապահովելու, որպեսզի բնակարանային գողությունների դեպքերով դեպքի վայրի զննությունը կատարվի լրիվ ծավալով, այն է՝ բացի բնակարանից, զննվեն նաև հարակից տարածքները, դեպքի վայրի զննությանը ներգրավել մասնագետներ, որպեսզի, բացի ձեռքի հետքերից, հայտնաբերվեն մազի, քրտինքի կամ հանցանք կատարած անձին անհատականացնող այլ հետքեր, մինչև զննությունը խստորեն պահպանվի դեպքի վայրը:

4) Ամփոփման արդյունքներով 7-օրյա ժամկետում նախապատրաստել և ՀՀ գլխավոր դատախազի ստորագրմանը ներկայացնել Երևանի քաղաքապետին և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարին ուղղված գրությունների նախագծեր՝ Երևան քաղաքի ու ՀՀ մարզերի տարածքներում գտնվող բազմաբնակարանային շենքերը տեսախցիկներով, շենքերի մուտքերի դռները հատուկ, կոդավորվող փականներով հագեցնելու, այդ աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները համայնքային բյուջեներում նախատեսելու հնարավորության հարցերը քննարկելու, ինչպես նաև նշված հարցերով բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ համագործակցությունը ակտիվացնելու առաջարկությամբ:

5. ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետին՝

Եռօրյա ժամկետում նախապատրաստել և ՀՀ գլխավոր դատախազի ստորագրմանը ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարին հասցեագրված գրության նախագիծ՝ հափշտակություն կատարելու համար դատապարտված անձանց ուղղման միջոցների կատարելագործմանն ու արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու առաջարկությամբ:

6. Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ Ա.Մարուխյանին՝

1. Ստուգել բնակարանային գողությունների դեպքերով 2016թ. ընթացքում քննված քրեական գործերի նախաքննության նկատմամբ դատավարական հսկողություն իրականացնելիս ՀՀ դատախազության ստորաբաժանումների դատախազների կողմից կայացված դատախազական ակտերի վիճակը (քանակական, որակական) և ստուգման արդյունքները տեղեկանքով ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին:

2. Սույն արձանագրության օրինակներն ուղարկել ՀՀ նախաքննության մարմիններին, ՀՀ ոստիկանություն:

3. Ներկայացրեց ՀՀ դատախազության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ Ս.Պարսամյանը

Երդման տեքստն ընթերցեցին և ստորագրեցին՝

1) **Գեղամ Մարատի Ներսիսյանը** – Երևանի կայազորի զինվորական դատախազության դատախազ,

2) **Հայկ Աշոտի Հայրապետյանը** – Գորիսի կայազորի զինվորական դատախազության դատախազ,

3) **Արամ Ավետիքի Մարտիրոսյանը** – Սևանի կայազորի զինվորական դատախազության դատախազ,

4) **Լեոնիդ Ալբերտի Նահապետյանը** - Սյունիքի մարզի դատախազության դատախազ,

5) **Տաթևիկ Սաշայի Ղուկասյանը** - Կոտայքի մարզի դատախազության դատախազ,

6) **Արթուր Լևոնի Զարգարյանը** – Տավուշի մարզի դատախազության դատախազ,

7) **Արտակ Աշոտի Ավետիսյանը** – Լոռու կայազորի զինվորական դատախազության դատախազ:

ԿՈԼԵԳԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ **Ա.ԴԱՎԹՅԱՆ**

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ **Մ.ՀԱԿՈԲՅԱՆ**